

# Գիտություն

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ

Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

## ՀՀ ԳԱԱ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ



2010 թվականի գիտական և գիտակազմակերպական ընդհանուր արդյունքներին էր նվիրված ՀՀ ԳԱԱ տարեկան ժողովը, որին ներկա էին Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը, ՀՀ նախարարներ, Ազգային ժողովի պատգամավորներ, բարձրաստիճան հյուրեր, տարբեր երկրներից ժամանած ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամները:

Ժողովը մեկնարկեց ապրիլի 14-ին՝ ԳԱԱ գիտական բաժանմունքներում տարվա արդյունքների ամփոփումով:

Հաճագորդի ըննարկումներին մասնակցեցին նաև ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամներ, իսկ մի շարք ԳԱԱ արտասահմանյան անդամներ հանդես եկան հետաքրքիր զեկուցումներով:

Ապրիլի 15-ին ԳԱԱ նիստերի դահլիճում գումարվեց տարեկան ընդհանուր հաշվետու ժողովը: Բացելով այն ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը խնդրեց մեկ րոպե լռությամբ հարգել հաշվետու տարում կյանքից հեռացած ակադեմիկոսներ էմիլ Գաբրիելյանի, Ստեփան Մադոյանի, Մելիստ Մով-

սիսյանի, թղթակից անդամ Նազարեթ Թովմասյանի հիշատակը:

Չայնը տրվում է Հայ առաքելական եկեղեցու պատվիրակ, Անուշավան Եպիսկոպոս Ժամկոչյանին: Սրբազանը ժողովի մասնակիցներին փոխանցեց Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի հայրապետական օրհնությունը և մաղթանքները՝ ի փառս հայ գիտության զարգացման և հաջողություն ժողովի աշխատանքների:

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի 2010 թվականի գիտական

գործունեության ընդհանուր արդյունքների մասին հաշվետու զեկուցումով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը:

Գիտությունների ազգային ակադեմիայի 2010 թվականի գիտակազմակերպական գործունեության մասին զեկուցումով հանդես եկավ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար Արամ Շահինյանը:

Զեկուցումներից հետո ծավալվեց մտքերի աշխույժ և շահագրգիռ փոխանակություն: Ելույթ ունեցան ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի տնօրեն Արամ Պապոյանը, ԼՂՀ գիտական կենտրոնի տնօրեն Սեմյոն Բաբայանը, պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը, ԳԱԱ ակադեմիկոս Արմեն Գալոյանը, ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի տնօրեն Վլադիմիր Սահակյանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ռաֆիկ Եղոյանը, փորձագիտության ազգային կենտրոնի տնօրեն Արտաշես Ջավադյանը:

Ժողովի մասնակիցները մեծ ուշադրությամբ լսեցին ՌԳԱ թղթակից անդամ, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, պետական էրմիտաժի տնօրեն Միխայիլ Պիտրովսկու «Հանրագիտական քանգարան 21-րդ դարում»... ՀՀ ԳԱԱ հիմնարար գրադարանի տնօրեն Տիգրան Զարգարյանի «Դեպի տեղեկատվական հասարակություն. ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառումը ՀՀ ԳԱԱ գիտական գրադարանում» բովանդակալից զեկուցումները:

## ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի 2010 թվականի գիտական գործունեության ընդհանուր արդյունքները

### ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանի հաշվետու զեկուցումը

ՀՀ ԳԱԱ հարգելի անդամներ, հարգելի մասնակիցներ, 2010թ. ՀՀ ԳԱԱ 26 ինստիտուտներում և 4 գիտական կենտրոններում շարունակվել են հիմնարար և կիրառական գիտական մշակումներ՝ բազային ֆինանսավորմամբ, նպատակային և միջազգային ծրագրերով և պայմանագրային աշխատանքների ուղղությամբ:

2010 թվականին գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցան կարևոր իրադարձություններ: Առաջին անգամ համաշխարհային ճանաչում ունեցող գիտնական Միշել Մայորին (Շվեյցարիա) և նրա խմբի անդամներ Նուր Սանթրոսին (Պորտուգալիա), Գաբրիլ Իսրայելյանին (Իսպանիա) ԳԱԱ-ի հանդիսավոր ընդհանուր ժողովում հանձնվեց ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային մրցանակ: Այս իրադարձությունը ոչ միայն Վ.Համբարձումյանի հիշատակի հավերժացմանը միտված միջոցառում էր, այլ նաև Հայաստանի գիտության փառատուն ամբողջ աշխարհում:

Հաշվետու տարում մեր գիտական կյանքում կարևորագույն ձեռքբերում էր «ՀՀ օրենքը գիտությունների ակադեմիայի մասին» օրենքի նախագծի ստեղծումը և ներկայացումը Ազգային ժողովի ըննարկումներին: Օրենքի ընդունումը կնպաստի մեր համակարգում գիտական մշակումների համար իրավական դաշտի հստակեցմանը, նպաստավոր պայմանների ստեղծմանը, կառավարման համակարգի ժողովրդայնացմանը: Նշված երկու իրադարձություններն իրա-

կանացվել են հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի անձնական նախաձեռնությամբ: Նախագահի մեկ այլ նախաձեռնությամբ այս տարի առաջին անգամ կշնորհվեց ՀՀ պետական մրցանակներ գիտության բնագավառում: Թույլ տվեք մեր հանրության անունից շնորհակալություն հայտնել հանրապետության նախագահին:

Հաշվետու տարվա կարևոր իրադարձությունը ՀՀ ԳԱԱ նոր իսկական և թղթակից անդամների ընտրություններն էր: Վերջին 10 տարիների ընթացքում առաջին անգամ տեղի ունեցավ ԳԱԱ-ի իսկական անդամների ընտրություն: Ակադեմիան համալրվեց նոր 4 իսկական և 16 թղթակից անդամներով: Ակադեմիայի նոր անդամներ դարձան վաստակաշատ գիտնականներ, որոնք գիտությունը հարստացրել են առաջնակարգ գիտական մշակումներով: Ընտրություններին մասնակցում էին նաև շատ արժանի գիտնականներ, որոնք, ափսոս, չընտրվեցին: Այս կապակցությամբ անհրաժեշտ է լրջորեն ուսումնասիրել և քննարկել ակադեմիայի անդամների ընտրության ողջ համակարգը, որը, կարծում եմ, մանրամասն կքննարկվի կանոնադրության փոփոխությունների համատեքստում կատարված ՀՀ ԳԱԱ-ի մասին օրենքի ընդունմամբ:

Հարգելի անդամներ, քանի որ այս տարի լրանում է ՀՀ ԳԱԱ-ի նախագահության գործունեության 5 տարվա ժամկետը, ապա զեկուցման մեջ անդրադարձ կլինի տարբեր տվյալների 5 տարվա կտրվածքով:

Ակադեմիայի ամբողջ համակարգում առ 1-ը հունվարի 2011 թվի աշխատում է 4056 մարդ, որը 258-ով ավել է, քան նախորդ տարում: Նախորդ տարվա համեմատությամբ գիտության դոկտորների թիվը պահպանվել է 335-ի չափով, իսկ գիտությունների թեկնածուների թիվը աճել է 50-ով և կազմում է 1126 մարդ: Եթե ընդհանուր աճի մեջ 50-ը հանենք թեկնածուական թեզեր պաշտպանելու պատճառով, ապա ընդհանուր աճի հիմնական մասը համալրված է երիտասարդ կադրերով:

ՀՀ ԳԱԱ-ն ամբողջ իր պատմության ընթացքում այդ թվում՝ նաև 2010 թվին, խաղացել է երկրում հիմնարար ուսումնասիրությունները համակարգողի գլխավոր դերը և իրականացրել հիմնարար և կիրառական գիտական հետազոտություններ:

2010 թվականին գիտական ստորաբաժանումներում պահպանվել է հիմնարար հետազոտությունների բարձր գիտական մակարդակը: Այդ է վկայում արտասահմանյան բարձր հեղինակություն ունեցող գիտական ամսագրերում տպագրված աշխատանքների թիվը, որը կազմում է 668 գիտական հոդված, 14 մենագրություն, ինչպես նաև 70 միջազգային ծրագրերով կատարված աշխատանք:

Մաթեմատիկայի ինստիտուտում կատարվել են մշակումներ լոկալիզացիայի հատկությամբ օժտված օպերատորների հաջորդականությունների համար, լիովին նկարագրված են նրանց զուգամիտության բազմութ-

# ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ ՄԱՐԾԻՐՈՍՅԱՆԻ հաշվետու պեկուցումը

➤ 1 յունները, որոնք ընդհանրացնում են նախկինում տարբեր մասնագետների կողմից ստացված բազմաթիվ թեքումներ:

Մեխանիկայի ինստիտուտում կառուցվել է փոփոխական հաստության օբյեկտային ուղղակի թաղանթների ճշգրտված տեսություն, որը հաշվի է առնում ընդլայնական սահմանի դեֆորմացիաների ազդեցությունը հաշվային մեծությունների վրա:

Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ուղղությամբ կառուցվել է ուսումնասիրվել է բազմաշախի բինար խորանարդի տրոհումը բաղադրյալ համասեռ բլոկների: Կառուցվածքը կարելի է դիտարկել որպես կատարյալ կոդերի մոտարկում: Ստացվել են այս կառուցվածքի վրա հիմնված փնտրման ալգորիթմների դաս և զննահատականներ նրա գործունեության արդյունավետության համար:

Աստղաֆիզիկայի բնագավառում ավարտվել են աշխատանքները արգելակային իրականություն միկրոտուրբուլենտ արագությունների որոշման ուղղությամբ: Մշակված մեթոդը հնարավորություն է տալիս որոշելու սպեկտրալ գծում ճառագայթող տիրույթների օպտիկական հաստությունն ու կինետիկ ջերմաստիճանը:

Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում ուսումնասիրվել են էրբիումի իոնների խառնուրդով կապարի մոլիբդատ բյուրեղների ֆոտոլյումինեսցենտային հատկությունները 980 նմ ալիքի երկարությամբ ճառագայթման ազդեցության դեպքում: Էրբիումի իոնների տարբեր կոնցենտրացիայով բյուրեղներում դիտվել են 1550, 550 ու 520 նմ տիրույթում ճառագայթումներ, որոնք պայմանավորված են  $E_2^{3+}$  իոնի 4f-4f անցումներով:

Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտում փորձով ցույց է տրված, որ (1011) հարթությունների ընտանիքի X կտրվածքով կվարիքի բիթերում գրգռված ակուստիկ ալիքները բերում են ռենտգենյան ճառագայթների կոհերենտ ցրման, որի պատճառով ցրվող ճառագայթման համար բյուրեղը դառնում է թափանցիկ:

Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում հետազոտվել են տարբեր անդրադարձնող պարբերական կառուցվածքների անդրադարձման փուլափոխության հատկությունները: Ցույց է տրվել, որ «սնկածն» և դիէլեկտրիկ-մետաղ կառուցվածքներում անդրադարձման փուլը կախված է համախառնից որոշ տիրույթում, որը կարելի է կառավարել կառուցվածքի պարամետրերի ընտրությամբ:

Ավարտվել են ՀՀ կենդանիների կարմիր գրքի լրանմանը և տպագրությանն ուղղված աշխատանքները: Այն ներառում է վտանգված 153 ողնաշարավոր և 155 անողնաշար կենդանիների տեսակ:

Բազմամետաղային հանքաքարերից և խտանյութից պղնձի, ցինկի և երկաթի մանրէաբանական տարալվացման ուսումնասիրությունները ցույց են տվել, որ բենդիթոտորֆ բակտերիաների միջոցով ֆիզիկաքիմիական պայմանների փոփոխությամբ կարելի է իրականացնել պղնձի, ցինկի և այլ արժեքավոր մետաղների ընտրողական կորզում, ինչը ավանդական տեխնոլոգիաների կիրառման դեպքում հնարավոր չէ:

Ալիքը է դրվել Ազոտովիտ -1 և Ազոցեովիտ էկոլոգիական տեսակետից բարձրարժեք կենսապարարտանյութերի արտադրության գործընթացին: Մոլեկուլյար կենսաբանության ինստիտուտում իշեմիկ կաթվածով հիվանդների մոտ հայտնաբերվել է հզոր ցիտոլիտիկ ազդեցող հանդիսացող թաղանթ: Հետազոտվել է սրտամկանի մեռուկացման մեխանիզմը, և պարզվել է, որ սրտամկանը սնուցող անոթների սեղմման և ռեպերֆուզիայի արդյունքում առաջացած մեռուկացումը լիովին վերանում է 4մկգ պրոլիմոլ հարուստ պեպտիդի ներարկումից հետո:

$V_2O_5$  և  $BPO_4$  պարունակող համակարգի հիման վրա մշակված են կիսահաղորդային ապակիներ և ապակեբյուրեղային նյութեր (անօրգանական քիմիայի «Նոր Առոմ» միջազգային կոնսորցիումի կազմում): Նոր հայկական ատոմակայանի ենթադրվող տարածքի համար իրականացվել են դաշտային և լաբորատոր աշխատանքներ ակտիվ խզված քալորման ընթացքում համար: Ֆրանսիայի Նիսի և Փարիզի 6 համալսարանների հետ համատեղ շարունակվել են հետազոտությունները Փոքր Կովկասի օֆիոլիտային գոտում:

Հաշվետու տարում հատուկ ուշադրություն է դարձվել ներդրման կամ տեխնոլոգիական ինովացիաների նպատակով կիրառական բնության հետազոտություններին: Այդ նպատակով նախատեսվել է խթանել գիտական կազմակերպություններում տնտեսության մեջ օգտագործվող գիտելիքի ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների իրականացումը, ծախսերի գիտության, տեխնոլոգիաների և ինովացիա պարունակող գիտելիքների զարգացումն ապահովող ներդաշնակ համակարգ:

Ստորև ներկայացվում են ՀՀ ԳԱԱ համակարգի 2010թ. իրականացված մշակումների արդյունքները, որոնք փոքր աջակցությամբ կարող են գտնել բազմապիսի կիրառություններ:

Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտում մշակվել են ինտերֆերենցիոն պատկերների բացարձակ փուլի վերականգնման արդյունավետ մեթոդներ:

Մշակվել է տեսաշարում դեմքերի հայտնաբերման և ճանաչման ծրագրային համակարգ:

«Վիրտուալիզմ» ՓԲԸ-ի կողմից մշակվել է 3-18մ/վրկ քամու արագության հոդմակայան 22% քամու էներգիայի օգտագործմամբ: Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում իրականացվել են երկշախի հոլոգրաֆիական ցանցեր  $LiV_2O_5$  լեզիրված բյուրեղներում հանդիպակաց Բենեյ-յան փնջերի եղանակով 532 նմ լազերային ճառագայթման օգտագործմամբ:

Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում շարունակվել են շրջակա միջավայրի ուսումնասիրությունները ռադիոֆիզիկական մեթոդներով:

Էկոլոգամոնոֆերային հետազոտությունների կենտրոնը մշակել է հատուկ մեթոդներ շրջակա միջավայրի աղտոտման մեխանիզմների, նրանց բացարձակ չափերի և աղբյուրների մասին: Հատկապես շատ կարևոր է ծանր մետաղների բաղադրության որոշումը հանրապետության տարբեր վայրերում: Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի կենտրոնում առաջարկվել է վիճակային մոնիթորինգի հիմքի վրա ստեղծված գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուների դեմ պայքարի համար անվտանգ «ЭКОСН» պարարտանյութ, որը ստացվել է Բույսերի պաշտպանության մեթոդ» վկայական և ընդգրկվել ՀՀ-ում բույսերի պաշտպանության թույլատրելի քիմիական և կենսաբանական միջոցների ցանկի մեջ:

Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտում շարունակվել են ուսումնասիրությունները խեցգետնի և տարբեր ձկների կենսաբանական ցուցանիշների և պոպուլյացիայի վիճակի և նրանց արդյունաբերական պաշարների գնահատման վերաբերյալ:

«Հայկենսատեխնոլոգիա» կենտրոնում մշակված «Ազոտովիտ-1» և «Ազոցեովիտ-1» կենսապարարտանյութերը արտադրական ծավալներով կենտրոնված գյուղատնտեսության մեջ: ՀՀ գյուղատնտեսության պիլոտային ծրագրի շրջանակներում արտադրվել և իրացվել է պարարտանյութերի անհրաժեշտ խմբաքանակ: Հանրապետության գրեթե բոլոր մարզերում անցած փորձարկումների արդյունքները ցույց են տվել կենսապարարտանյութի բարձր արդյունավետությունն ու էկոլոգիական նպաստավոր բնութագիրը: Ստացված արդյունքների հիման վրա 2010թ. հոկտեմբերի 21-ին ընդունված է ՀՀ կառավարության կենսապարարտանյութերի շուկայի զարգացման վերաբերյալ արձանագրային որոշում:

Հ. Բուհիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտում ստացվել են արժեքավոր արդյունքներ պրոլիմոլ հարուստ պոլիպեպտիդի և նրա սինթետիկ ածանցյալների ազդեցության վերաբերյալ: Առանձնակի են պոլիպեպտիդների, հատկապես «Գալարմինի» բուժիչ և կանխարգելիչ հատկությունները սիրիայան խոցի, ինչպես նաև խոշոր եղջերավոր անասունների տուբերկուլոզի նկատմամբ:

Մանվելյանի անվան անօրգանական քիմիայի ինստիտուտում  $V_2O_5$  և  $BPO_4$  պարունակող համակարգերի հիման վրա մշակվել են կիսահաղորդային ապակիներ և ապակեբյուրեղային նյութեր:

Երկրաֆիզիկայի ինստիտուտում նախագծվել, պատրաստվել և փորձարկման է ենթարկվել կոշտ հիշողությամբ թվային աղտոթեսների արժեքները: Փորձարկման արդյունքները հիմք են հանդիսացել պատրաստելու տեխնոլոգիական հարմարանքներ սարքի փոքր քանակության թողարկման համար:

## ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

I. Հայկական ազգային գրիդ միջավայրի ստեղծում: «Ազգային գրիդ ինֆրակառուցվածքի ստեղծում» խմբի նպատակն է Հայաստանում ստեղծել և ապահովել ազգային հաշվողական միասնական գրիդ ինֆրակառուցվածքը, որը կմիավորի Հայաստանի գիտահետազոտական, կրթական և այլ կազմակերպությունների սույն ոլորտի հաշվողական ռեսուրսները ազգային միասնական հաշվողական գրիդ ինֆրակառուցվածքի մեջ:

II. «Հայոց պատմություն» երկհատորյակի հրապարակում (պատմության ինստիտուտ) Ծրագրի հիմնական նպատակն է առաջին անգամ ստեղծել Հայոց պատմության ակադեմիական երկհատորյակներ՝ ռուսերեն և անգլերեն լեզուներով: Հեղինակները 2010 թվականին ավարտել են ռուսաց լեզվով տեքստերի շարադրանքը:

III. «Հայաստանի հարակից երկրների պատմություն» (ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ) Քառհատորյակը ներառում է Մերձավոր և Միջին Արևելքի, Կովկասի երկրները և ժողովուրդներին, ինչպես նաև Ռուսաստանը, բոլոր այն երկրները և ժողովուրդները, որոնց հետ առնչվել է հայ ժողովուրդը, աշխատանքի երրորդ և չորրորդ հատորների աշխատանքները գրեթե ավարտված են:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Միջազգային գիտական համագործակցությունն ուղղված է եղել նպաստելու ՀՀ ԳԱԱ ինստիտուտների և առանձին գիտնականների ակտիվ մասնակցությանը միջազգա-

յին գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերին և միջազգային միջոցառումներին: 2010 թվականին իրականացվել են այդ ուղղությամբ աշխատող 3 ստորաբաժանումների ներդաշնակ աշխատանքներ: **Դրանք են** արտասահմանյան կապերի, միջազգային գիտատեխնիկական ծրագրերի և սփյուռքի բաժինները: Համագործակցության ծրագրերն իրականացվել են ՀՀ ԳԱԱ-ի, Ռուսաստանի ԳԱ-ի, Հունգարիայի Հանրապետության ԳԱ-ի, Բելառուսի ԳԱ-ի, Գերմանիայի Մաքս-Պլանկի ընկերության, Ֆրանսիայի CNRS կենտրոնի և այլ երկրների գիտական կենտրոնների հետ: Ծրագրերի նպատակներն են համատեղ հետազոտությունների իրականացումը և հետազոտական նոր ծրագրերի մշակումը, մասնագետների պատրաստումը և վերապատրաստումը, արտասահմանյան գիտական կենտրոնների և ԳԱԱ-համակարգի կազմակերպությունների հետ համագործակցության պայմանագրերի և համաձայնագրերի կնքումը, համատեղ աշխատությունների պատրաստումը, Հայաստանում կազմակերպվող գիտակրթական և գիտակազմակերպչական միջոցառումներին մասնակցությունը, ինչպես նաև համատեղ միջազգային գիտաժողովների կազմակերպումը:

Հաշվետու տարում արտասահմանյան երկրներ են գործուղվել ԳԱԱ-ի 460 գիտաշխատողներ, այդ թվում՝ գիտական միջոցառումների մասնակցելու՝ 222, համատեղ աշխատանքներ կատարելու՝ 174, բանակցություններ վարելու և կոնսուլտացիաների նպատակով՝ 64: Նույն նպատակով արտասահմանից ժամանել են 549 գիտնականներ: Սեկնած և ընդունված գիտնականների թիվը համեմատած նախորդ տարվա հետ աճել է մոտ 20%-ով:

Հաշվետու տարում համակարգում կատարվել են աշխատանքներ 70 տարբեր մեծ ու փոքր ծրագրերով՝ 1.5 միլիոն ԱՄՆ դոլար գումարով: Միջազգային համագործակցության արդյունավետությունը որոշվում է համատեղ ստացված գիտական արդյունքների մակարդակով և այն համատեղ կառուցվածքային միավորներով, որոնք ստեղծվել են շնորհիվ արդյունավետ համագործակցության:

Վերջին 2-3 տարիներին ակտիվ համագործակցություն է ծավալվել Ֆրանսիայի CNRS կենտրոնի և մեր ակադեմիայի մի քանի ինստիտուտների միջև: Մասնավորապես համատեղ գիտական լաբորատորիաներ են ստեղծվել ֆիզիկական հետազոտությունների, երկրաբանության ու հնագիտության և ազգային պատմության ինստիտուտների միջև:

Համագործակցության պայմանագիր է կնքված Գերմանիայի Մաքս-Պլանկի ընկերության և ՀՀ ԳԱԱ-ի միջև:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի և Հունգարիայի գիտությունների ակադեմիայի միջև կնքվեց նոր պայմանագիր, և հաստատվեցին նոր համագործակցության թեմաներ, որի շրջանակներում հունգարացի 4 գիտնականներ ժամանեցին ՀՀ ԳԱԱ տարբեր ինստիտուտներ, և 2 գիտնականներ մեկնեցին Հունգարիայի գիտությունների ակադեմիա՝ համատեղ հետազոտական աշխատանքներ իրականացնելու և վերապատրաստման:

ՀՀ ԳԱԱ-ի և Իտալիայի աստղաֆիզիկայի միջազգային կենտրոնի հետ ունեցած համագործակցության շրջանակներում մշակված կառույցի նախագահ Ռեմո Ռուֆինին ժամանեց Երևան, և ստորագրվեց համագործակցության հուշագիր՝ համատեղ կենտրոնի ստեղծման վերաբերյալ:

Ապրիլին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի և Ռուսաստանի միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի միջև կնքվեց գիտության, նորամուծությունների և կրթության բնագավառում համագործակցելու համաձայնագիր:

Ավարտվում են բանակցությունները եռակողմ պայմանագիր կնքելու շուրջ ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի, ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի և ԱՄՆ Կալիֆոռնիայի նահանգի Integre ընկերության միջև ռադիոֆիզիկայի բնագավառում կադրերի պատրաստման և համատեղ գիտատեխնիկական աշխատանքներ կատարելու համար:

2010 թվականի ընթացքում ՀՀ կազմակերպությունները մասնակցել են ԵՄ 7ԾԾ-ի մրցույթներին ներկայացված 106 նախագծերի, որոնցից 22-ը հաստատվել են ֆինանսավորման համար: ՀՀ ԳԱԱ-ի մասնակցությամբ նախագծերի շրջանակներում համակարգի ներկայացուցիչներին հնարավորություն է ընձեռվել մասնակցելու արտասահմանյան տարբեր երկրներում կայացած մի շարք միջոցառումների:

Հաշվետու տարում միջազգային համագործակցության կարևոր մաս են աշխատանքները կապված հիմնականում նորընտիր արտասահմանյան անդամների հետ: Այդ նպատակով նրանք քննարկումներ են ունեցել ԳԱԱ համակարգի գիտական կազմակերպությունների ղեկավարների հետ, որոնց ընթացքում ձեռք են բերվել պայմանավորվածություններ համատեղ հետազոտությունների և նոր ծրագրերի իրագործման, ասպիրանտների համատեղ ղեկավարման, մասնագետների պատրաստման և վերապատրաստման, արտասահմանյան գիտական կենտրոնների և ԳԱԱ համակարգի կազմակերպությունների հետ համագործակցության պայմանագրերի կնքման, համատեղ աշխատությունների պատրաստման, ԳԱԱ տեղեկագրերի խմբագրական

# ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ հաշվետու պեկուցումը

➤ 2 կազմերում ընդգրկման, Հայաստանում կազմակերպվող գիտաժողովների և սեմինարների մասնակցության, գիտաժողովների կազմակերպման վերաբերյալ:

Այնուհետև զեկուցողը հանգամանորեն կանգ առավ համագործակցության կոնկրետ դրսևորումների վրա՝ «Ասպիրանտների ղեկավարում», «Գիտությունների դոկտորների պատրաստման աջակցություն», «Համատեղ հետազոտությունների իրականացում և աջակցություն», «Համագործակցության պայմանագրեր և ծրագրեր», «Մասնակցություն ՀՀ կազմակերպված գիտական միջոցառումների» և այլն:

## ԳՐԱՂԱՐԱՆՆԵՐ

Ակադեմիայի համակարգում գործում են հիմնարար գիտական գրադարանը (ՀԳԳ) և 29 ճյուղային մասնագիտական գրադարաններ: ՀԳԳ-ն իր հավաքածուներում ունի 3.012290 գրադ.միավոր, որոնցից 856342-ը՝ եվրոպական լեզուներով: Հաշվետու տարում ձեռք է բերել 11162 միավոր: Ակադեմիական բոլոր գրադարաններն իրենց հավաքածուներում ունեն 5,463,703 գրադարանային միավոր: Համակարգի բոլոր գրադարանները 2010 թվականին ձեռք են բերել 19306 գրադարանային միավոր:

ՀԳԳ-ն միջազգային գրադարանական գծով հաստատված կապեր է պահպանել 353 կազմակերպությունների հետ: Կատարվել են նոր սպասարկման գործընթացներ ընթերցողների սպասարկման որակը բարձրացնելու նպատակով: Շարունակվել են ՀԳԳ էլեկտրոնային քարտարանի ձևավորման աշխատանքները: Ներկայումս մատենագիտական տվյալների շտեմարանում մուտքագրված է 370.677 գրադարանային միավոր: Ամբողջությամբ ավարտված է հայելգու գրականության մուտքագրումը:

ՀԳԳ-ն, որպես մեթոդական կենտրոն, աջակցել է ինստիտուտների գրադարաններին, դրանց արդիականացման և նորովի աշխատելու առումով: Այդ նպատակով կազմակերպվել են տարբեր բնույթի դասընթացներ գրադարանավարների մասնագիտական վերապատրաստման ուղղությամբ: Այժմ 15 ինստիտուտների գրադարաններ աշխատում են նոր տեխնոլոգիայով և զբաղվում են իրենց նյութերի թվայնացմամբ, նրանք հաշվետու տարում մուտքագրել են 10722 գիրք: Մեծ աշխատանք է տարվել հնատիպ և վաղ շրջանի գրքերի ակադեմիական ամսագրերի թվայնացման և գրադարանի կայք էջում տեղադրման գործում:

Որպես հեռանկարային ուղղություն գրադարանը խիստ կարևորում է անցումը քոթային կրիչներից էլեկտրոնայինին: Հաշվետու տարում ավարտվել են «ՀՀ Տեղեկագիրը», «Մեխանիկա» (1966-2005թթ.) նկարահանված և մշակված 15044 էջ, «Տեխնիկական գիտություններ» (1948-1956թթ. 5761 էջ), «Բնական գիտություններ» (1943-1947թթ. 3521 էջ), «ՍՍՀՄ ԳԱ Հայկական մասնաճյուղի տեղեկագիր (1940-1942թթ. 1879 էջ) ամսագրերի հոդվածների թվայնացման, մատենագիտական նկարագրության և գրադարանի կայքէջում տեղադրման աշխատանքները: Ընթացքում է նոր ամսագրերի թվայնացումը: Օրեցօր ավելացվող աշխատանքների ծավալը ապահովելու համար գրադարանը նախագծել և պատրաստել է նկարահանող սարք, որը արդյունավետ օգտագործվում է: Գրադարանը մեծ աշխատանք է կատարում «Հայկական մաթեմատիկական հանդես» և «Ֆիզիկայի հայկական հանդես» էլեկտրոնային ամսագրերի հրատարակման և համացանցում տեղադրելու համար:

## ԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԵՐ

2011 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ ԳԱԱ աշխատողների ընդհանուր թիվը 4056 է, այդ թվում գիտական աշխատողներ՝ 2439, որից գիտության դոկտորներ՝ 334, գիտության թեկնածուներ՝ 1126, գիտական աշխատողներ առանց գիտական աստիճանի՝ 979: Աշխատանքից ազատվել են 9 դոկտորներ և 60 թեկնածու, ընդունվել են 7 դոկտոր, 51 թեկնածու, 136 երիտասարդ մասնագետ, որոնցից 32-ը ընթացիկ տարվա շրջանավարտներ են: Համակարգի աշխատակիցներից 9-ը պաշտպանել են դոկտորական, 42-ը թեկնածուական ատենախոսություններ:

Համակարգի բարձր որակավորման գիտական կարգերի պատրաստումն իրականացվում է գործող ասպիրանտական համակարգով: Հաշվետու տարվա սկզբում ԳԱԱ-ի ասպիրանտուրայում պետական պատվերով սովորում էին 179 ասպիրանտ, այդ թվում 98-ը արտադրությունից կտրված, 81-ը արտադրությունից չկտրված, վճարովի հիմունքներով 156-ը:

Հաշվետու տարում ընդունվել են արտադրությունից կտրված 33 ասպիրանտ, արտադրությունից չկտրված 17 ասպիրանտ, վճարովի հիմունքներով 25 ասպիրանտ, այդ թվում 23-ը՝ արտերկրից: Ընդհանուր առմամբ արագ աճում է ասպիրանտների և մագիստրոսների թիվը հիմնականում շրջակա երկրներից: Երևույթը համարելով դրական և ակադեմիայի գիտակրթական կենտրոնի հեղինակության հետևանք՝ պետք է երբեք չմոռանալ կարգերի պատրաստման որակը բարձր պահելու մասին:

Ցածր օղակի մասնագետների պատրաստումն իրականացվում է մագիստրոսական կրթական ծրագրերով ԳԱԱ գիտակրթական կենտրոնի կողմից: Հաշվետու տարվա սկզբում մագիստրատուրայում սովորում էին 852 մագիստ-

րոսներ, որոնցից 48 պետական պատվերով: 2009-10 ուս.տարվա շրջանավարտների թիվը կազմել է 380, որից 69-ը ավարտել են գերազանցությամբ: Մագիստրոսական ուսուցումն իրականացվում է 26 տարբեր մասնագիտությունների ուղղությամբ: Հաշվետու տարում մագիստրատուրա ընդունվածների թիվը կազմել է 567, որից 28-ը պետական պատվերով:

Համակարգի հիմնական կադրային պոտենցիալը ստեղծվում է բուհական համակարգի շրջանավարտների հաշվին: Ակադեմիան, շահագրգռված լինելով ստանալու բարձր որակավորման մասնագետներ, ակտիվ համագործակցության մեջ է մեր առաջատար բուհերի հետ: Համագործակցությունը ներառում է համատեղ գիտական հետազոտությունները, որն իրականացվում է ստեղծված համատեղ 10-ի հասնող գիտական և ուսումնական կառույցների



օգնությամբ: Նման համագործակցություն է ստեղծված ԵՊՀ-ի, Սլավոնական, Ճարտարագիտական համալսարանների, Գյուղատնտեսական ակադեմիայի և Սանկտապետական բուհերի հետ: Բարձր որակավորման կարգերի պատրաստման ժամանակակից չափանիշները պահանջում են փնտրել համագործակցության նոր ձևեր: Համագործակցության կարևորագույն երաշխիք է ԳԱԱ-ի շատ անդամների մշտական աշխատանքը բուհական և այլ գերատեսչական համակարգերում: Նրանք, միավորվելով ակադեմիայի համակարգի անդամների հետ, մեր բաժանմունքներում պետք է հանդիսանան սպառնալից կարևոր օղակը:

Ընդհանուր առմամբ ԳԱԱ-ի 270 առաջատար մասնագետ մասնակցել են ուսումնական և գիտական համատեղ աշխատանքի: Այդ համագործակցության արդյունքում համատեղ տպագրվել են մոտ 175 գիտական հոդվածներ և գիտաժողովների թեզիսներ: Բերված համագործակցության մասին տվյալների մեջ հաշվի չեն առնված տասնյակ գիտության դոկտորներին և ակադեմիայի անդամներին, որոնք ամեն տարի տարբեր բուհերում ավարտական քննությունների շրջանում հանդես են գալիս որպես պետական քննական հանձնաժողովների նախագահներ:

Համագործակցությունն արտահայտվում է նաև բարձր գիտական որակավորման ուղղված աստիճանաշնորհման համակարգում: ԲՈՒՀ-ի կողմից ստեղծվող գիտական խորհուրդների կազմերը համալրվում են բուհական, դասախոսական և գիտական կառույցների մասնագետների կողմից: Այդ խորհուրդներն այժմ ստեղծվում են մինչև ընթացիկ տարվա ավարտը, նկատի ունենալով, որ այս տարվա ընթացքում ստացված նոր առաջարկությունները ուղղված են նրանց արդյունավետության բարձրացմանը:

## Գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորումը

2010թ. ՀՀ ԳԱԱ ամբողջ համակարգի համար պետական ֆինանսավորումը կազմել է 4142763,7 միլիոն դրամ, որից 3507198,0 միլիոնը կազմել է բազային և այլ ֆինանսավորում, իսկ թեմատիկ (պայմանագրային) ֆինանսավորումը կազմել է 565,565 միլիոն դրամ: Նպատակային ծրագրերի ֆինանսավորումը մնացել է անփութի 70 միլիոն դրամ: Հատկացվել են նաև տարբեր չափի նպատակային գումարներ: Կառավարության պահուստային ֆոնդից 100 միլիոն դրամ հատկացվել է քաղաքաշինության նախարարությանը, որը տարվա վերջին այդ ծավալի աշխատանքներ է կատարել նախագահության և համակարգի 5 հիմնարկների համար: Մասնավոր և պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորվել են 4. Համբարձումյանի անվան միջազգային մրցանակի գումարները: Հաշվետու տարում ընդհանուր աշխատավարձի ֆոնդը ավելացվել է և ուղղվել նվազագույն աշխատավարձի բարձրացմանը մինչև 32,5 հազար դրամ: Ակադեմիայի ընդհանուր համակարգի աշխատավարձի ֆոնդը պետական բյուջեից կազմել է 2905 միլիոն դրամ ամբողջ ֆինանսավորման 75%-ը:

Համակարգի աշխատողների միջին ամսական աշխատավարձը մեկ մարդու հաշվով կազմել է 59,7 հազար դրամ: Ընդհանուր ֆինանսավորման աճը 2010 թվականին կազմել է մոտ 300 միլիոն դրամ, որի դրական ազդեցությունը եղել է շատ փոքր՝ սղաճի պայմաններում:

Հաշվետու տարում համակարգի կազմակերպությունների կողմից որոշակի աշխատանք է կատարվել արտաբյու-

ջետային միջոցների ձեռքբերման ուղղությամբ: Գիտական կազմակերպությունները շարունակել են մասնակցել միջազգային գիտական կենտրոնների և հիմնադրամների կողմից հայտարարված դրամաշնորհման ծրագրերին:

2010 թվականին ինստիտուտների աշխատողները կատարել են աշխատանքներ 70 տարբեր ծրագրերով՝ 1,5 միլիոն ԱՄՆ դոլար ֆինանսական ծավալով: Բացի դրամաշնորհային ակտիվ գործունեությունից, մի շարք ինստիտուտներ կատարել են նաև պայմանագրային աշխատանքներ, որոնք հիմնականում գիտական արդյունքների ներդրման շնորհիվ ստեղծված նոր սարքեր և սարքավորումներ են վճարովի տարբեր ծառայություններ և վարձավճարներ: Արտաբյուջետային միջոցների ընդհանուր ծավալը կազմել է 1,9 միլիարդ դրամ, որը տարեկան ընդհանուր ֆինանսավորման 33%-ն է: Սա լավ ցուցանիշ է զարգացող երկրների համար: Եթե արտաբյուջետային միջոցների 50 %-ը կազմում է աշխատավարձը, ապա համակարգի յուրաքանչյուր աշխատող միջինում լրացուցիչ կունենա 25000 դրամ ամսական: Արտաբյուջետային միջոցներն ինքնուրույն կապելանան, եթե մոտակա տարիներին որոշ ինստիտուտների ինֆրակառուցվածքը լրացվեն ժամանակակից գիտատեխնիկական միջոցներով:

Ընթացիկ տարում պլանավորված է արտադրել մեծ ծավալի պարարտանյութ գյուղատնտեսության համար: Մետաղուպ համատեղ ձեռնարկությունը շուտով կսկսի արտադրել հեղուկ ազոտի և հատակների համար նոր նյութի արտադրություն: Մեծ հնարավորություններ կարող է ունենալ ղեղազիտության և օրգանական քիմիայի կենտրոնը ղեղերի արտադրության գործում: Բացի նշված ինստիտուտներից արտաբյուջետային բավականին մեծ գումարներ կարող են ստանալ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի, անօդաչուական քիմիայի, ֆիզիկական քիմիայի, ֆիզիկական հետազոտությունների և այլ ինստիտուտներ, եթե լինի ոչ մեծ ծավալի աջակցություն:

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Հաշվետու տարում, հնարավորությունների սահմաններում, սոցիալական հարցերը եղել են ուշադրության կենտրոնում: Ամբողջ համակարգի միջին աշխատավարձը պետական բյուջեից կազմել է մոտ 60 հազար դրամ: Եթե հաշվի առնենք նաև արտաբյուջետային միջոցները, ապա այն կկազմի 80 հազար դրամ: Սակայն այստեղ պետք է նկատել, որ արտաբյուջետային միջոցներից ոչ բոլորն են օգտվում, և այն բաշխվում է ոչ հավասարաչափ: Ավելացվել է նվազագույն աշխատավարձը կազմելով 30 հազար դրամ: Բավականին ծավալի սոցիալական բնույթի գործունեություն է կատարել «Ակադեմիայի գիտության զարգացման» հիմնադրամը: Այս խողովակով համակարգի 23 աշխատողներ կազմակերպություններից ստացել են 4 65 միլիոն դրամ նյութական օգնություն: Հիմնադրամի ստեղծման 3-4 տարիների ընթացքում նյութական օգնության ծավալը կազմել է 16 միլիոն դրամ: Այս բնույթի աջակցության ծավալները կավելանան, եթե մեզ հաջողվի ավելացնել մուտքերը:

Սոցիալական խնդիրների մեջ կարևոր տեղ է զբաղվում աշխատողների աշխատանքային պայմանների բարելավումը: Այս առումով էական առաջընթաց չենք ունեցել, որովհետև երկու-երեք տասնամյակների ընթացքում չեն վերանորոգվել (կապիտալ) հիմնարկների մասնաշենքերը, լաբորատորիաները, գիտության ամբողջ ինֆրակառուցվածքը: Չհաշված ամեն տարի համակարգին հատկացվող սահմանափակ միջոցները հրատապ փոքր վերանորոգումների համար: Մասնավորապես հաշվետու տարվա ավարտին կառավարությունը տրամադրեց 100 միլիոն դրամ՝ մի շարք ինստիտուտներում և նախագահության մասնաշենքում մասնակի վերանորոգումներ կատարելու:

Այս ծանր խնդիրների լուծմանը կնպաստի որոշ ազատվող տարածքների իրացումից ստացված միջոցների ներդրումը զարգացման ծրագրերին, որոնց համար ստացել ենք հանրապետության նախագահի համաձայնությունը:

Սոցիալական ծանր խնդիրներից է բնակարանային պրոբլեմը, որը ավելի ծանր հետևանքների է բերում հատկապես երիտասարդների դեպքում: 2010 թվականին ՀՀ նախագահի նախաձեռնությամբ նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի տարածքում կկառուցվի բնակելի մեծ շենք, որտեղ մեր համակարգի մոտ 200 երիտասարդ գիտաշխատողներ կստանան բնակարաններ համեմատաբար ցածր գներով (հիփոթեքային միջոցներով):

Ժողովի հարգելի մասնակիցներ, Պարզ է, որ մեկ զեկուցման մեջ դժվար է ներկայացնել մեր համակարգի բոլոր ստորաբաժանումների ձեռքբերումներն ու բացթողումները: Կարծում եմ, որ ակտիվ գործնական ջանքերով ընթացքում շերտ ելույթներում կնշեք մեր կարևոր անելիքները գիտության բնագավառում, ինչը կնպաստի մեր երկրում գիտելիքի վրա հիմնված տնտեսության և հասարակության զարգացմանը:

(ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանի հաշվետու զեկուցումը տպագրված է մասնակի կրճատումներով)



## ՀՀ ԳԱՍ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

Ներկայացնում է ՀՀ  
ԳԱՍ սփյուռքի բաժինը



խառնաճյուղային և ութ մենագրություններում: Խ.Ս. Բաղդասարովը նաև հեղինակ է 112 հեղինակային իրավունքի: Նա բարձր-ջերմաստիճանային բյուրեղացման խնդիրների լուծման համար, ի տարբերություն ուրիշ հետազոտողների, հիմնական ուշադրությունը դարձրել է նյութի հալման և բյուրեղացման ընթացքում բարձրջերմաստիճանին ֆիզիկաքիմիական երևույթներին: Այս մոտեցումը Խ. Ս. Բաղդասարովին թույլ է տվել ստեղծել մոնոբյուրեղների աճեցման նոր մեթոդ, որն անվանվել է Բաղդասարովի մեթոդ և լայն տարածում գտել շատ երկրներում: Այս մեթոդի իրականացման համար, բացի նոր տեխնոլոգիայից, նա ճարտարագետների հետ մշակել է մի շարք բյուրեղացման սարքեր:

Խ.Ս. Բաղդասարովը խոշոր ներդրում ունի արդիական օպտիկական մոնոբյուրեղների սինթեզի տեսության մեջ: Ակադեմիկոս Ա.

տադրություն: Մի շարք երկրներ, ինչպիսիք են Ճապոնիան, Ֆրանսիան, Շվեյցարիան, Կորեայի Հանրապետությունը, Բուլղարիան ձեռք են բերել Բաղդասարովի մեթոդի լիցենզիոն արտոնությունը և սարքավորումները:

Կատարյալ մոնոբյուրեղների սինթեզի խնդրի լուծման գործում մեծ ներդրում ունենալու համար Խ.Ս. Բաղդասարովը 1972թ. արժանացել է ԽՍՀՄ պետական մրցանակի:

Մեծ է նաև Խաչիկ Բաղդասարովի ներդրումը՝ կապված փոքր չափերի, սակայն հզոր տեխնոլոգիական լազերների ստեղծման գործում, որի համար էլ 2000 թվականին արժանացել է Ռուսաստանի պետական մրցանակի: Խաչիկ Բաղդասարովը ներկայումս զբաղված է խոշոր էլեկտրապահիի և կրեմնիի մոնոբյուրեղների աճեցման խնդրի լուծմամբ:

Խ. Բաղդասարովը օժտված է կազմակերպչական մեծ տաղանդով, ինքնատիպ տեխնիկական լուծումներ գտնելու և իրագործելու ունակությամբ:

Խ. Բաղդասարովը "Кристаллография" գիտական ամսագրի խմբագրական կոլեգիայի անդամ է, ավելի քան քսան տարի եղել է ԲՈՒՀ-ի փորձագետ: Պարգևատրվել է շքանշաններով և մեդալներով:

Նա ակտիվ մասնակցություն է ունեցել մոնոբյուրեղների աճեցման և բյուրեղացման սարքերի արտադրության համար մի շարք խոշոր կենտրոնների հիմնադրման աշխատանքներում, որոնցից կարելի է առանձնացնել «Լազերային տեխնիկա» գիտաարտադրական միավորումը (Երևան), մոնոբյուրեղների համամիութենական գիտահետազոտական ինստիտուտը (Խարկով), էլեկտրաքիմիային սարքավորումների գործարանը (Տազանոգ), էլեկտրոնային մեքենաշինության գործարանը (Լուգանսկ, Ուկրաինա):

Հայաստանում քվանտային էլեկտրոնիկայի և ոչ գծային օպտիկայի զարգացումը զգալիորեն կախված էր լազերային և ոչ գծային բյուրեղների սեփական հետազոտական բազայի առկայությունից: Այդպիսի բազայի ստեղծման աշխատանքների կազմակերպման գործում նշանակալից դեր է խաղացել ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի բյուրեղագրաֆիայի ինստիտուտը: Խաչիկ Բաղդասարովի անմիջական մասնակցությամբ 60-ականների սկզբում Կիրովականի (այժմ՝ Վանաձոր) քիմիական կոմբինատում ներդրվեց ռուբինի բյուրեղների աճեցման տեխնոլոգիան: Արդյունքում Կիրովականի քիմկոմբինատը և Արզնիի ճշգրիտ տեխնիկական քարերի գործարանը դարձան ԽՍՀՄ նախկին տարածքի գիտահետազոտական կազմակերպություններին ռուբինի ակտիվ տարրերի հիմնական մատակարարողը:

Բաղդասարովի աջակցությամբ և մասնակցությամբ Կիրովականի քիմկոմբինատի ֆիզքիմիական լաբորատորիայի և Հայաստանի Հանրապետության ազգային ակադեմիայի ֆիզիկական հետազոտությունների

ինստիտուտի Կիրովականի մասնաճյուղի հիմքի վրա 1967 թվականին ստեղծվեց լազերային բյուրեղների աճեցման, լազերային տեխնոլոգիայով նոր նյութերի ստեղծման և գոյություն ունեցող նյութերի արդիականացման միավորված լաբորատորիա: 1970 թվականին Աշտարակում ՀՀ ԳԱՍ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի տարածքում, սկսվեցին լազերային բյուրեղների ստացման և հետազոտման աշխատանքները: Այստեղ առաջիններից մեկը ԽՍՀՄ տարածքում, ստացան նեոդիմով ակտիվացված խորի-այլումինային նոնաքարի լազերային բարձրջերմաստիճանային բյուրեղներ: Այսօր էլ ՀՀ ԳԱՍ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում մեծ հաջողությամբ շարունակվում են աշխատանքներն այդ ասպարեզում, ինչպես նաև տարբեր բյուրեղների հետազոտությունները, որոնք ստացել են միջազգային մեծ ճանաչում:

2004թ. Խ.Ս. Բաղդասարովի մասնակցությամբ Հայաստանում հիմնադրվել է "Bagdasarov Crystal Group Production" (BCG Production) կազմակերպությունը, որտեղ Բաղդասարովի մեթոդով աճեցնում են արդյունաբերական սապֆիրի և նոնաքարի բյուրեղներ:

Բացի գիտատեխնիկական բազա ստեղծելուց, Բաղդասարովը կազմակերպել է նաև այդ ասպարեզներում աշխատող գիտական կադրերի պատրաստումը: 1968-1972 թվականներին ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի բյուրեղագրաֆիայի ինստիտուտի բարձրջերմաստիճանային բյուրեղացման նրա ղեկավարած լաբորատորիայում դիպլոմային աշխատանքներ են կատարել Երևանի պետական համալսարանի 15 ուսանող: Հետագայում նրանցից շատերը նաև վերապատրաստվել են այդ լաբորատորիայում, կատարելագործել մասնագիտական որակը: Խ.Ս. Բաղդասարովի անմիջական ղեկավարությամբ կամ նրա լաբորատորիայի աշխատակիցների ղեկավարությամբ Հայաստանի բուհերի 9 շրջանավարտներ ատենախոսություններ են պաշտպանել և առաջատար մասնագետներ դարձել բյուրեղային տարրեր միացությունների աճեցման և հետազոտման ասպարեզում:

1964թ. Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Ա.Վ. Շուբնիկովի անվան բյուրեղագրաֆիայի ինստիտուտում Բաղդասարովի հիմնադրած բարձրջերմաստիճանային բյուրեղացման լաբորատորիան դարձել է խոշոր կառույց, որը մինչև հիմա լուծում է հիմնարար և կիրառական կարևոր խնդիրներ:

Հաշվի առնելով Խաչիկ Ասիակի Բաղդասարովի գիտնականի համաշխարհային ճանաչումը և սերտ կապերը Հայաստանի հետ, բարձր գնահատելով նրա ավանդը գիտության մեջ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան 2008թ. նրան ընտրեց ՀՀ ԳԱՍ արտասահմանյան անդամ:

Այսօր էլ Խաչիկ Բաղդասարովը աշխատում է նոր գաղափարների իրականացման, նոր մոնոբյուրեղների ստացման և դրանց կիրառության վրա: Նա մշտապես համատեղ աշխատանքներ կատարելու առաջարկներ է ստանում Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Չինաստանի, Իսրայելի, Հունաստանի հետազոտական կենտրոններից:

## ՀՀ ԳԱՍ արտասահմանյան անդամ Խաչիկ Ասիակի ԲԱԳԴԱՍԱՐՈՎ

Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Ա.Վ. Շուբնիկովի անվան բյուրեղագրաֆիայի ինստիտուտի բարձրջերմաստիճանային բյուրեղացման լաբորատորիայի վարիչ, ճարտարագիտական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ, ԽՍՀՄ և Ռուսաստանի պետական մրցանակների դափնեկիր, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խաչիկ Ասիակի Բաղդասարովը ծնվել է 1929 թվականի մայիսի 21-ին, Սամարղանդ քաղաքում, ավանդական հայկական ընտանիքում: Խ.Ս. Բաղդասարովը դպրոցն ավարտել է Սամարղանդում, ապա մեկնել Մոսկվա, որտեղ ընդունվել է պողպատի և ձուլվածքների ինստիտուտ:

Խաչիկ Բաղդասարովի գիտական գործունեությունը սկսվել է ասպիրանտական տարիներից՝ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի բյուրեղագրաֆիայի ինստիտուտում, ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Ա.Վ. Շուբնիկովի ղեկավարությամբ, որտեղ նա ընդունվել էր 1953թ.: Նրա թեկնածուական թեզը, որը նա պաշտպանել է 1957թ., թույլ է տվել որոշել ուլտրաձայնի ազդեցության բնույթը բյուրեղացման վրա, մշակել ինքնատիպ մեթոդ, որոշելու մոնոբյուրեղներում դիսլոկացիաները, և հայտնաբերել ցինկի մոնոբյուրեղների ամրացման էֆեկտը ուլտրաձայնային դաշտում դրանց աճեցման ընթացքում:

Խ.Ս. Բաղդասարովի գիտական հետազոտությունները հիմնականում նվիրված են բարձրջերմաստիճանային բյուրեղացման և տեխնիկական արժեքավոր մոնոբյուրեղների աճեցման յուրահատուկ մեթոդների ստեղծմանը, որոնց արդյունքները իրատարակված են ավելի քան 350 գիտական աշ-



Ս. Պրոխորովի հետ համատեղ նա զարգացրել է այն միտքը, որը թույլ է տալիս կարճ ժամանակահատվածում ռուբինի բյուրեղների վրա ստանալ ճառագայթում օպտիկական դիապազոնում: Այս խնդրի լուծումն ունեն սկզբունքային նշանակություն, քանի որ այդ ուղղությամբ միաժամանակ աշխատում էին նաև այլ երկրներ, այդ թվում և ԱՄՆ-ի գիտնականները: Ռուբինի վրա ստեղծված օպտիկական զենքատորները թույլ են տալիս լուծել կարևոր խնդիրներ, որոնցից է ակադեմիկոս Լ. Պ. Բասովի ղեկավարությամբ հատուկ տեխնիկայի համար հեռաչափերի և լուսնի լազերային լուկացիայի ստեղծումը: Լուսնի լուկացիայի նշանակությունը ոչ միայն այն էր, որ առաջին անգամ հաջողվեց ղեցիմետրի ճշտությամբ որոշել հեռավորությունը մինչև լուսին, այլ նաև այն, որ ցուցադրվեց օպտիկական լուկացիայի և կապի ակնհայտ հեռանկարային լինելը:

Խ.Ս. Բաղդասարովի գիտական ղեկավարությամբ լուծվել են լազերային տեխնիկայի մի շարք այլ կարևոր խնդիրներ: Շնորհիվ Խ.Ս. Բաղդասարովի հետազոտությունների Ռուսաստանում հիմնադրվել է լազերային բյուրեղների արդյունաբերական ար-

## Հայ գիտնականները նշեցին Յուրի Գագարինի փեզերը կապարած թռիչքի 50-ամյա հոբելյանը

Ապրիլի 8-ին ՀՀ ԳԱՍ-ում տեղի ունեցավ հանդիպում ռուսական պատվիրակության հետ՝ նվիրված առաջին տիեզերագնաց Յուրի Գագարինի տիեզերք կատարած թռիչքի 50-ամյա հոբելյանին: Պատվիրակությունը գլխավորում էր տիեզերագնաց Միխայիլ Տյուրինը:

Հանդիպման ընթացքում ամփոփվեցին հայ գիտնականների ունեցած փորձի արդյունքները, ինչպես նաև քննարկվեցին տիեզերական տարածության յուրացման հետագա համագործակցության ուղիները: ՀՀ ԳԱՍ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը ներկայացրեց ՀՀ ԳԱՍ ռադիոֆիզիկայի և էլեկտ-

րոնիկայի ինստիտուտի փորձը տիեզերական հետազոտությունների ծրագրերում: Տիեզերական աղբի խնդրի լուծման ուղիները ներկայացրեց ՀՀ ԳԱՍ Բյուրականի աստղաֆիզիկական աստղադիտարանի տնօրեն Հայկ Հարությունյանը: Վահե Գուրզադյանը պատմեց «Օրիոն» ուղեծրային համակարգի մշակման գործում հայ գիտնականների փորձի մասին: Ակադեմիկոս Էվրիկ Աֆրիկյանը զեկույցեց տիեզերական թռիչքներում միկրոբային դեգրադացիաների և երկրագնդի մերձակա տարածությունների յուրացման մասին:





# ՄԻՋ ԱՐԱՐԱՏԻՑ

(Սկիզբը մայրաքաղաքում)

Բայց եթե անգամ դա ճշմարիտ լինի, ինչին որ երբեք չեն հավատա կյանքի փորձով կեղծիքը ճանաչող մարդիկ, մի՞թե դա ապացուցում է նրանց հանցանքը, որոնց խողով են, բանտերում խեղդել, սովի անապատը բռնել։ Ոչ մի հանցանք չեն կարող ունենալ ծովերներն ու մայրերը, այստեղ արյունն է սոսկ հանցավորը։ Դա է այն միակ պատճառը, որ նրանց դարձրել է իրենց հալածիչների կատաղի ատելության առարկան։ Ոչ մի երկրային երևակայություն չի հանդգնի պատկերացնել մարդկային այն հալածանքների տառապանքը, որ կրել են գաղթականների բազմությունները այրվող և բռնաժուգ գրավված քաղաքում։ Ականատեսն այսպես է նկարագրում այդ սարսափները։

«Ամերկակայելի տեսարաններ տեղի ունեցան փողոցներում ու նավահանգիստներում։ Նոր կյանքեր էին ծնունդ առնում հենց ծովերի քարերի վրա կամ նավամատույցի փայտամածին։ Մի կին, որի երկունքը բռնել էր այն միջոցին, երբ ճիգով ճամփա էր բացում դեպի մակույկը, զգուշորեն խցկվում է դռներից ներս՝ նորածինը ծնեցողին, մինչ երկու փոքրիկ երեխաները կախվել էին փեշերից։ Քիչ անց նա իր փոքրիկ ընտանիքով հայտնվում է նավի վրա, իսկ նրա ամուսինը, որ զինապարտ է, իսկույն կռվում է ծերբակալվում է, որ հետո աքսորվի երկրի խորքերը։ Մի ուրիշ տղամարդու, որ շալակել է իր հիվանդ կնոջը, վերջին շաբաթը ետ են դարձնում։ Նա իր բեռը դնում է ծովափի քարերին և խնդրում ծառայող թուրք սպային, որ թույլ տա իրեն անցնել։ Սարսափից ծանածովում է կնոջ դեմքը, երբ նրան երկու անգլիացի նավաստի առաջաստալաքի պատգարակով նավ են բարձրացնում, մինչ նրա ամուսինը միանում է ծերբակալվածներին։ Մարդկանց հորձանքն անելու հետ ահագնանում է և ողբերգությունը։ Մանուկները սայթաքում են և տրորվում ոտքերի տակ։ Ուղեփակոցները մի պահ բացվում են, իսկ այդ միջոցին մի ուրիշ նավ է մոտենում մատույցին։ Ճիչ ու վայնասուն է պոկվում ամբողջից։ Մա նախագգում է ամենավատթարը՝ փրկության ճանապարհին այլևս փակ է առհավետ»։

Այս եղբրական տողերի վրայով սահող մեր աչքերը չեն համարձակվում այլևս առաջ գնալ։ Սիս, տեսնում ենք, թե ինչպես են մարդիկ անասունների պես սարսափից կորցնում բանականությունը, իրար հրմշտելով՝ հորձանալը։

**Թուրք նշանավոր ռասիստ, երիտթուրքերի կուսակցության պարագլուխներից մեկը՝ Ադա Գընդզզ ճիվաղային մոլուցքով գրել է. «Պարբերազմ գնալուց առաջ թող որ ես ձեզ ասեմ, թե ինչ եմ անելու. իմ վերցրած ամեն բուռ հողից արյուն պիտի ժայթքի, և իմ ճիրանների մեջ գարուններն աշունների և աշունները ձմեռների պիտի փոխվեն, եթե ես քարը քարի վրա թողնեմ՝ ապա թող իմ օջախը ավերակ դառնա, իմ սփիւնը վարդերով լեցուն պարտեզները գերեզմանի պիտի վերածի, և ես կկտակեմ պապությանը այնպիսի ավերակներ, որ իրաւը դար շարունակ քաղաքակրթություն չպիտի ծաղկի. գթութունը իմ սրի ծայրից կկախեմ, իրավունքը՝ հրացանիս բլթակից, և քաղաքակրթությունը՝ ձիուս ոտքերից։ Եվ լեռնախորշերը, ավերակների այլանդակ պարկերները հավիտյան կասեն՝ «Թուրքն է անցել այստեղից»։**

զորվում։ Տեսնում ենք, թե ինչպես է ծովը ծածկվում խեղդվողներով, որ դեպի նավերը լող տալով՝ ապարդյուն ջանում են փրկվել, և որոնց կարկամած մարմիններն ալիքները բռնում են ետ դեպի ափը։ Գիշերը կրակի բծերով ծածկված, ոռնում է սարսափից, և հրկիզված տներից խուճապահար դուրս են թափվում տղամարդիկ, կանայք ու մանուկներ, որպեսզի կարկառած բազուկներով նետվեն զնդացիների ահասարսուռ հեռոցի մեջ։ Խավարի միջով, մինչև Եվրոպայի գիշերային անդորրն է հասնում նահատակվողների ողբ ու կոծը, որոնց խողխողում են փողոցի մի անկյունում, և հաջորդում է մի խորին լուռություն, որ ավելի զարհուրելի է, քան դրան նախորդած աղաղակը։

Իսկ ի՞նչ էր կատարվում երկրի խորքերում, երբ այսքանը տեղի էր ունենում նավերի հայացքի դեմ-հանդիման։ Չէր իսկ զինվորական ջոկատների աչքի առաջ։ Ի՞նչ եղան այն անհամար բազմությունները, որոնց բռնեցին լեռների կիրճերը, որոնք դատապարտված էին ճանապարհների վրա հարկադիր աշխատանքի, որոնց արգելում էին զլխի վրա ծածկ ունենալ և հիվանդանալիս գրկում էին ուտեստից, որ արագացնեն նրանց մահը։ Գետափների ավազներից շնեքը փորում հանում են բզկտված դիեր, իսկ այն օրագիրը, որ կազմել է ղոկտոր Վարդը այս անցքերի մասին ամերիկյան օգնության կոմիտեի համար, ամեն մի էջով հիշեցնում է այն հաշվեցուցակները, ուր գրանցվում է մեր խոշոր քաղաքների սպանդանոցներում մորթված անասունների զխաքանակը»։

Ջոն Կլայտոնը իր թղթակցության մի այլ տեղում մեզ պատմում է մի թուրք երիտասարդի ազնիվ արարքի մասին, որն իր հայրենակիցների անագորույն դաժանությանը հակառակ՝ պաշտպանության տակ է առնում մի հիվանդ գաղթականի։ Եվ ավելացնում է. «Եթե ամբողջ աշխարհը գալարվի հոգեվարքի ցնցումների մեջ, դարձյալ պետք է իշխել մի անհատի այդ փոքրիկ արարքը։ Եթե չես ուզում խելագարության հասնել»։ Այս հենց դրա համար էլ մենք չենք կասկածում, որ այդ ժողովրդի հոգու խորքում էլ ապրում է խղճի ծայրը, բայց դա մեզ միշտ հուսախաբ է արել, հենց որ հավատ ենք ընծայել նրան, և միշտ էլ հուսախաբ կանի, քանի դեռ այդ ժողովուրդը, Իսլամի բիրտ ծեղքի տակ կաշկանդված, գերի կլինի վայրագ էլուզակների ոհմակին, որոնք իրենցից վերև ոչ մի այլ օրենք չեն ճանաչում իշխելու և հարստանալու սին մոլուցքից զատ։ Սիս թե ինչու այդքան չնչին է թուրքական բանակների կատաղությունը, երբ եսամու Արևմուտքը ջանում է մասնատել նրանց հայրենիքը, ոչ պակաս, քան Թուրքիան Չայաստանը, և որոնք զագագում են հուսական գործի խուճապահար նահանգից, բայց ոչ աշխարհի քաղաքակիրթ պետությունների վարմունքից, որ մեզ զայրույթ է պատճառում։ Սիս այս է Եվրոպան, որը միշտ մի անիրավություն աշխատում է փոխհատուցել մեկ ուրիշով, և չի թաքցնում իր հրժանքը այդ հաղթանակի առթիվ, հաղթանակ, որ գնված է տասնյակ հազար անմեղ կանանց ու մանկանց արյունով, Եվրոպան, որն ավելի շուտ մի շահեկան գործարք կկնքի նրանց խոշտանգողների հետ, քան թե տեղահանված մարդկային մի ցեղի խլակներին կփրկի կործանումից։

Մի՞թե Արևմուտքի հաղթող պետություններն այդպես են կատարում իրենց հանդիսավոր խոստումները։ Դուք, որ ձեր ժողովուրդների իմաստուն ծառաներն են ձեզ համարում, բավական չէ, որ հազարավոր վերքերից արյունաքամ եղած հայ ժողովրդին դեռ պատերազմի միջոցին ստիպում էիք ռազմական կամավորներ տրամադրել, երիտասարդ հայկական հանրապետությանը էլ խոչընդոտում էիք եղեռնից մազապուրծ եղած գաղթականներին տեղափոխելու իրենց հայրենի վայրերը։ Դուք թույլ տվեցիք, որ անապատան երեխաները նորից խլվեն ամերիկյան որբանոցներից, որ ոչնչացնեն Վանի բնակչության մնացորդներին, որը շատ հեռու է Անկարայի կառավարության համար վտանգավոր լինելուց, ավելին՝ իր թուրք տերերի համար բեռնատար գրաստների դեր էր կատարում։ Ֆրանսիան սոսկ նրա համար գրավեց Կիլիկիան, քանզի ախորժուռ էր նրա պողպատե հարթավայրերն ու նրա բամբակը։ Բայց Անկարայի դաշնագրով, ես չգիտեմ՝ նավթի, թե ո՞ր օգուտների համար, այդ գավառը նորից հանձնեց թուրքական կամայականությանը։ Հարյուր հիսուն հազար հայեր, որոնք Ֆրանսիական Հանրապետության խոսքին վստահելով վերադարձել էին այնտեղ, վերստին իրենց մատնված տեսան իրենց ղափիճների ձեռքը։ Ե՞րբ է, վերջապես, ձեր մեջ ես արթնանալու այն գիտակցությունը, որ աշխարհի արժեքները փերեզակների կշեռքով չէ, որ կշռում են, քանզի ձեր արյան մեջ էլ ավելի ազնիվ մի ծայն է խոսում։ ոչ թե նավթը կամ բամբակը, այլ մա ղոց։ Մի՞թե նույն այդ Ֆրանսիան չէր, որ ինչպես վաղորդյան շեփորահար, աշխարհին շարունակ փողհարում էր. թե անցած պատերազմը ինքը մղել է սոսկ փոքր ժողովուրդների ազատությունը պաշտպանելու համար։ Բայց որտե՞ղ է

փոքր ազգերի ազատությունը։ Ա՛խ, բարեկամներս, ինչպիսի ամոթ է համակում մեզ այսքան ցինիզմից կամ ճանարտակությունից։ Մի՞թե Ֆրանսիան չէր Թուրքիային մատակարարում այն զենքերը, որոնք խոցեցին Հայաստանի սիրտը, մի՞թե Անգլիան չէր վարում այն նավերը, որոնք Փոքր Ասիայում ափ հանեցին հունական գորբը։ Հապա՛. Ամերիկան, այն երկիրը, ուրկից բազում հալածված ազգերի հույս էր ճառագում. - մի՞թե նրա պառլամենտների ու պետական այրերի համար այս ժողովրդի խորունկ վիշտն ավելին էր, քան ցանկալի պատերազմի մի ազդանշան, իսկ նրա արյունաթաթախ մահաշապիկը մի ներկած լաթ, որ նա թափահարում էր իր սեփական, իր իսկ մոլորեցրած ժողովուրդների առաջ, ինչպես խաղաղ արածող ցուլի առաջ են թափահարում նրանց արդար գործի պայքարի հրահրելու համար։ Մենք, որ երբեք չենք ցանկացել չարի հաղթանակը, ինչպիսի՞ բաղձանքով կուզեինք, որ ձեր կողմը լինեք արդարության հաղթանակը, բայց լոկ ընչաքաղցություն և կեղծիք է այնտեղ, ուր դուք հավակնում եք աշխարհի խիղճը դառնալ։

Դուք Արևմուտքի վեհապետներ լող, դուք չեք կարող ձեզանից վանել այն մեղքը, որ ընդունակ չեղաք կանխատեսելու ձեր իսկ անճանաչատ վարքի առաջ բերածի արյունալի հետևանքները։ Երբ հուսահատված և վայր գլորվող Գերմանիան այս անգամ թույլ տվեց եղեռնը, այնժամ հողագնդի բոլոր ժողովուրդները ցատումով լի ծայն բարձրացրին այդ շատ անպատասխանատու անտարբերության դեմ։ Իսկ ի՞նչ արեցիք դուք՝ հաղթող պետությունների առաջնորդները։ Բազում այս նոր արհավիրքների դեմ հանդիման մենք չպիտի՞ արդյոք կարծենք, որ արդարությունն ընդմիշտ չբվել է երկրի երեսից, և որ Արևմուտքի տերություններն իրենք են իրենց դատապարտման ենթարկել։ Դուք, ում վճռով միայն գործի են դրվում գորաբանակներն ու ընդերքի զանձերը, դուք կարող եք, իհարկե, ծաղրել այն զգացմունքները, որ տագնապում են տեղահանվածների բախտի համար, որ խղճմտանքն է իրենց դատավոր կարգել բռնության վրա, և որ անգոր ու հուսահատ մարդկանց բերանով ինքը՝ ժողովուրդների ծայնն է խոսում։

Եթե կա մի ազգ, որ այս պատերազմից հետո արժանացել է համայն աշխարհի կարեկցանքին, ապա դա հայությունն է ու նրա ճակատագիրը։ Արևելքի ու Արևմուտքի սահմանագծում, Կովկասյան այն լեռների ստորոտում, որ պատմությունն անվանել է ժողովուրդների կամուրջ, այս ժողովրդին վաղուց հետե հերոսական խնդիր էր վի-

**«Վաղ թե ուշ պետք է իրագործվի Թուրքիայի բոլոր հպարակների օսմանականացումը, բայց մի բան պարզ է, որ դա երբեք չի կատարվի համոզելով, այլ պետք է իրականացվի զենքի ուժով»։**

**Սալոմեիկ, 1911 թ. հոկտեմբեր (Իրքիհատականների համագումարի որոշումից)**

ճակված միջնորդ դառնալ երկու մշակույթների միջև, մի խնդիր հատկապես ճակատագրական այն պատճառով, որ այս ժողովուրդը արևելյան բարբարոս հորդաներով շրջապատված, վաղ դարերից ի վեր հակված էր Արևմուտքի մշակույթների կողմը։ Եվրոպայի խորը անկման ողբալի ու ամոթալի նշանն է դա. մենք թույլ տվեցինք անապատի պես ամայացնել հենց այդ երկիրը և նրա բնակիչները՝ իրենց հարազատ տուն ու տեղից բռնված, ողբալի գոյությունն են քարշ տալիս օտար երկրի սոսկ։ Ատելույթություն ու անբանականությունը խորտակեցին ժողովուրդների, կամուրջը, որի բեկված սյուները դուրս են ցցվել գորշության նեխած ճանճից։ Բայց, թեև այսքան հուսախելություններից հետո էլ Հայաստանն այլևս չի կարող ակնկալել, որ իրեն գոհացում տան Արևելքի երկրների վերաբերյալ հաշտության բանակցությունները, որի համար այժմ երկրորդ անգամ խորհրդակցության են հավաքվել աշխարհի տերությունները, այսուհանդերձ նա երբեք էլ չպիտի դադարի հավատալ իր ազատագրմանը։ Որովհետև, նրանց համար, որ այդքան կրքոտ սիրով կառչած էին իրենց մի թիզ հողին, որ անապատում իրենց մահվան թափորի ժամանակ էլ մի բուռ հող էին տանում լաթերի մեջ, որպեսզի մեռնելիս զլխի տակ դնեն, նրանց երկիրը մշտապես մի գորացնող մայր կլինի և, գաղտնախորհուրդ գործությամբ լեցուն, պիտի բանա արյունով թաթախված իր գիրկը, որ նոր ընծյուղներ արձակի իր ընդերքից։ Տարաբախտ ժողովրդի վերջին բեկորների հայացքները հավատով սևեռված են Արարատի գագաթին, ուր մի ժամանակ Նոյի աղավճին բերեց խաղաղության ձիթենու ծյուղը։ Բայց պարտքն ու պատասխանատվությունը, ո՞վ հաղթողական պետությունների պարագլուխներ, առ միշտ կարատավորեն ձեր և բոլոր բարոյակրթված ժողովուրդների խիղճը, եթե դուք թույլ տաք, որ մահաբեր հեղեղը մի անգամ ևս սկսի բարձրանալ նրա լանջերն ի վեր, որպեսզի, զուցե, մեկընդմիշտ, նրա շողջողուն գագաթը թաղի արյան ծովի տակ։

1922 թիվ

Գերմաներենից թարգմանեց բանասիրության դոկտոր Ալեքստ ԳՈՒՆԵՐՅԱՆԸ

# ՈՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ Է ԱՌԱՋԻՆԸ ՃԱՆԱԶԵԼ <ԱՅՈՑ ԳԵՆՈՑԻԴԸ ԿԱՄ ԱՐՄԵՆՈՑԻԴԸ

Երիտթուրքերի կատարած 1915-1922 թվականների արմենոցիդի իրողությունը առ այսօր ճանաչել են 21 պետություն։ Նշվում է նաև, որ պաշտոնապես առաջինը դա արել է Ուրուգվայը՝ 1965 թվականին։ Բայց արդյո՞ք այդպես է։

Պետականորեն ծրագրված հայ ժողովրդի ոչնչացումը նպատակ ուներ ոչ միայն ֆիզիկապես բնաջնջել երկրի տեղիներին, այլև յուրացնել նրա դարերի ընթացքում ստեղծած մշակույթը, շարժական և անշարժ գույքը, կառույցները, այգիները, անասունները, հանքային հարստությունները և այլն։ Ճաշխոսները նման գենոցիդ իրագործեցին հրեա ժողովրդի նկատմամբ, որը կոչվեց հոլոքոստ (ողջակիզում), բայց ֆաշիստների իրավահաջորդները ընդունեցին այդ իրողությունը և ներողություն խնդրեցին հրեաներից, նաև հատուցեցին նյութապես։ Մինչդեռ թուրքերը ոչ միայն հատուցեցին մասսիս չեն մտածում, այլև ժխտում են կատարվածը։

Վերջերս լույս տեսավ հայոց ցեղասպանությանը նվիրված ևս մի գիրք «Արմենոցիդը ճանաչված ցեղասպանություն է» վերջնագրով, որի հեղինակն է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի Հանրապետության ազգային ակադեմիայի թղթակից անդամ, գիտության վաստակավոր գործիչ Նիկոլայ Հովհաննիսյանը։ Հեղինակը գրքում համառոտ ներկայացնում է Օսմանյան կայսրությունում իրականացված հայոց ցեղասպանությունը, ընդգծում է Ուաֆայե Լեմկինի կողմից գենոցիդ եզրի հայտնաբերման կարևորությունը՝ կապված հայոց ողբերգության հետ, միաժամանակ ըստ արժանվույն գնահատում է Մուսա Պրենսի արմենոցիդ եզրի ստեղծման կարևորությունը՝ որպես հրեական հոլոքոստին համարժեք մի տերմին՝ որպես ընդհանուր գենոցիդ եզրից առանձնացվող երևույթ։

21-րդ դարի տարբերություն մյուս ժողովուրդների ցեղասպանությունների, հայերի բնաջնջման հետ միասին յուրացվել է նաև նրանց պատերի երկիրը՝ հայրենիքը։

Հեղինակը կարևորում է ցեղասպանություն իրականացնելու հարցում երրորդ կողմի դերը, որը խրախուսել, օժանդակել է այդ ոճրի իրագործմանը, մինչդեռ կարող էր կանխել հանցագործ պետության մտադրությունը։ Խոսքը վերաբերում է Թուրքիայի դաշնակից Գերմանիային։ Այս մասին քիչ հետո։

Հեղինակը «Չուլումի» պետության վախճանը համարում է 1918 թ. հոկտեմբերի 30-ը, երբ «Ազամեմոն» նավի վրա ստորագրվեց հրադադար, և Օսմանյան կայսրությունը դադարեց գոյություն ունենալուց։ Գրքի արժանիքները բազմաթիվ են, բայց մենք կանգ կառնենք այն գլխավորի վրա, որը գյուտ ենք համարում։

Նիկոլայ Հովհաննիսյանը տալիս է հայոց ցեղասպանության համառոտ պատմությունը, իրփիհատականների անփառունակ վախճանը և նրանց իրավահաջորդների կողմից կազմված պատերազմական արտակարգ ատյանի ստեղծումը՝ Փաղիշահ Վահեդդին VI-ի ֆետվայով (իրամանագրով)։ Անգամ թուրքական մասշտաբներով զազանությունների չափն անցկացրած ոճրագործներից դատարանը ներկայացրեց երկու հիմնական մեղադրանք. առանց մեջլիսի համաձայնության երկիրը պատերազմի մեջ քաշելու և հայերի բնաջնջումը կազմակերպելու իրողությունը։ Փաստորեն այս երկրորդ մեղադրանքն արդեն հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչումն էր, որն ապացուցելու համար ահիրաժեշտ էին վկայություններ, փաստաթղթեր, հրամանների պատճեններ, ծածկագիր հրամաններ և այլն։

Արտակարգ հանձնաժողովը նամակներ և հեռագրեր ուղարկեց բոլոր վայրերը՝ պահանջելով տվյալներ գավառապետների, ոստիկանապետների և այլ ղեկավարների ոճրագործությունների մասին, որոնք դրվեցին ատյանի տրամադրության տակ։ Հարցաքննվեցին նաև նախկին պաշտոնյաներ, որոնց վկայությունը շատ կարևոր էր, որովհետև այս ծիվադները իրենց համարում էին վերևից տրված հրամանների կատարողներ։

Դատարանի գործունեությունը խոստումնալից էր՝ ոճրա-

գործներից 11 հոգի արժանացան կախաղանի և 10-15 տարի թիապարտության, սակայն անգլիացիների մեղքով այն ընդհատվեց։ Հանցագործներից 125-ին նրանք տեղափոխեցին Մալթա կղզի, մի մասին փոխանակեցին բրիտանացի 23 զեռի զինվորների հետ, իսկ մյուսներին ազատ արձակեցին։ Մեր հոգվածի նպատակը անգլիացիների այս ամոթալի արարքը բնեղել չէ, այլ արտակարգ ռազմական ատյանի վճիռը, որը Ն.Հովհաննիսյանը բերում է իր գրքում և գնահատում է որպես հայոց ցեղասպանությունը ընդունելու իրողություն, այսինքն՝ որ առաջինը իրենք՝ թուրքերն են դատարանի որոշմամբ ընդունել հայոց ցեղասպանության փաստը, որ չի բեկանվել, մնացել է ուժի մեջ։ Սա է Ն.Հովհաննիսյանի գյուտը։ Սա աններելի բացթողում է համարում նա հայ դիվանագետների, պատմաբանների և պետական գործիչների, խորհրդատուների կողմից։ Գլխավոր դատախազ Մուստաֆա Նազմի կարգում է դատարանի վճիռը. «Լիովին ապացուցված է, որ այդ կոտորածները տեղի էին ունենում Թալեաթ, Էնվեր և Ջեմալ բեյերի անմիջական հրամաններով և գիտությամբ։

Հարցաքննության ընթացքում ճշմարտությունը բացահայտվել է ամբողջապես... Կոտորածների և չարաշահումների հետևանքով օսմանցիների արժանապատվության վրա ընկած արյունոտ հետքերը, օսմանցիների ճակատը մոտոած սև բծերը կարելի է ջնջել միայն արդարության գրչով»։

Եվ այսպես, հայասպան հանցագործներին պատժելու համար ստեղծված Արտակարգ դատարանի եզրակացությունը (վճիռը) անբեկանելի էր և չբեկանվեց, որովհետև դատարանը հաստատված էր և լիզիտիմ Փաղիշահ Վահեդդին VI-ի հրամանագրով՝ ֆեդայով և բազմաթիվ ղեկավար վկաների ցուցմունքներով։ Ուրեմն՝ ցեղասպանությունը առաջինը ընդունել են հենց իրենք՝ իրփիհատականների իրավահաջորդները, իսկ մենք պահանջում ենք կամ գրում ենք, որ թուրքերը առ այսօր չեն ընդունել արմենոցիդը։ Ն. Հովհաննիսյանը այս փաստը «աններելի պատմական վիճակում» է համարում հայերի կողմից։ Թուրքերի կողմից ընդունված հայասպանության այս խոստովանությունը կարող է շատ բան փոխել այն պետությունների քաղաքականության մեջ, որոնք չեն ուզում վատացնել իրենց հարաբերությունները Թուրքիայի հետ։

Դատարանում բացահայտվեցին և հաստատվեցին անասելի դաժանությունների, բռնաբարությունների, կոդուպուտների ու այլ խժոժությունների մանրամասնություններ։ Ոճրագործները դատարանում ուրանում էին իրենց մեղքերը՝ ներկայանալով որպես վերևից տրված հրամանների կատարողներ։ Ահա Բողազլյանի և Յոզգաթի 35 հազար հայերի ջարդը իրականացնող արմախում հրեշ՝ Բեմալի, չքմեղանքը կախաղան բարձրացվելուց առաջ։ «Միտելի հայերականիցներ, ես մի թուրք պաշտոնյա եմ, ես կատարեցի այն հրամանը, որ ստացա։ Իմ պարտականությունը կատարեցի խղճամիտ ձևով, երդվում եմ, որ ես անմեղ եմ։ Սա է իմ վերջին հայտարարությունը քե այսօր, քե վաղը։ Օտար պետություններին հաճելի դառնալու համար եմ ինձ կախաղան հանում։ Եթե սա է արդարությունը, թող կորչի այն հավիտյան»։

Իսկ մահապատժից 12 օր առաջ նրա գրած կտակում այսպիսի տողեր կային.

«Իմ ողով տոգորված թուրք և իսլամ եղբայրներ, իմ գեթեզմանի վրա պետք է կանգնեցնեն մի կորոզ և գրեն վրան հետևյալ տապանագիրը. «Ազգի և հայրենիքի համար նահատակված Բողազլյանի զայմագամ Բեմալի հաղթական ոգուն»։

Եվ անմահանալու մասին այն ծիվաղն է երազում, որի խղճի վրա 35 հազար անմեղ հայերի արյունն էր նստած, հազարավոր աղջիկների պղծման, բռնաբարման և հայերի հարստության բալանման փաստը։

Ի դեպ, Բեմալի կառավարությունը նրա աճյունը տեղափոխեց Անկարա՝ որպես ազգային հերոս մեծարելով հրեշին։ Ինչպես վերը նշեցինք, Նիկոլայ Հովհաննիսյանի գրքում բարձրացված կարևոր հարցերից մեկն էլ այն է, որ արմենո-

ցիդի իրականացման գործում նա անժխտելի է համարում երրորդ կողմի դերը, տվյալ դեպքում Թուրքիայի դաշնակից և խորհրդատու Գերմանիայի դերը, որի մասին խոսվել է, սակայն կեսբերան, քերթնակի։ Այնինչ եկել է Գերմանիային ևս Թուրքիայի հետ արմենոցիդի իրագործման հարցում մեղսակից ճանաչելու պահը։ Այս հարցը բարձրացնում է գերմանացի սոցիոլոգ, հայագետ, Բեռլինի Ազատ համալսարանի գիտաշխատող Թեսա Հոֆմանը։ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի թղթակցի հետ ունեցած զրույցի ժամանակ նա ասել է. «Եղապալանության ճանաչման փուլն ավարտված է, եկել է ցեղասպանների հետնորդների հետ իրավունքի լեզվով խոսելու ժամանակը»։

Պատմաբանների հանձնաժողով ստեղծելու առաջարկը Թուրքիայի հերթական խորամանկ քայլն է, որը որևէ նոր արդյունք չի կարող տալ. փաստացի հսկայական զրականություն է ստեղծվել։ Եկել է իրավունքի խոսելու ժամանակը։ Տիկին Թեսա Հոֆմանն ասում է. «Այս պահին միջազգային քրեական դատարանի հետ պետք է գործ ունենալ. այդ քայլը, սահմանված կանոնների համաձայն, Հայաստանի կառավարությունը կարող է անել, բայց ոչ՝ հայ ազգը»։

Իսկապես պահանջատեր հայ ժողովուրդը Թուրքիային պիտի ներկայացնի հողային, գույքային, մշակութային և ֆինանսական պահանջներ, որ միլիարդավոր դոլարների են հասնում։

Հոֆմանն օգտագործում է «կես մեղքի բաժինը» արտահայտությունը՝ որակելու համար Գերմանիայի ունեցած դերը արմենոցիդի հարցում։

Առաջին աշխարհամարտի ժամանակ և դրանից էլ առաջ, Թուրքիայի խորհրդատու և մարտական ընկերն էր Կայզերական Գերմանիան։ Երկու անգամ Կայզեր Վիլհելմը այցելելով Կարմիր Սուլթանին, ստացավ 2 հազար 800 կմ երկարությամբ Բեռլին-Բաղդադ երկաթուղու շինարարության թույլտվությունը։ 1914 թվին զորակոչված հայ երիտասարդության ոչնչացումը կատարվեց նաև գերմանացիների կողմից՝ Բեռլին-Բաղդադ երկաթուղու թունելների դժվարին հատվածներում հյուծելուց հետո նրանց զնդակահարեցին։ Այս մասին բազմաթիվ վկայություններ կան։ Նույն Գերմանիայի թղթագրածիզների օգնությամբ ռմբակոծության ենթարկվեցին Ուրֆայի հերոսական պաշտպանների դիրքերը։ Իսկ հազարավոր հայ եկեղեցիների զանգերը չէին ուղարկվում Կրուպի գործարանները՝ թղթագրած ծուլելու համար։

Եվ, ի վերջո, մահվան դատապարտված թուրք պարագլուխները որտե՞ղ պատսպարվեցին, եթե ոչ դաշնակից Գերմանիայում։

Թալեաթն ու Ջեմալը փախան գերմանական սուզանավով։

Նույն Թեսա Հոֆմանը, առանց քաշվելու կամ վախենալու, հայոց ցեղասպանության «կես» բաժինն էլ հատկացնում է Գերմանիային։ Նա ասում է. «Գերմանիան երկուսուկես ցեղասպանություն է գործել. առաջինը 1904-ին Աֆրիկայում՝ Նամիբիայում, հետերո-նամա գեղը ոչնչացնելով, երկրորդը՝ 1915 թվականին՝ ոգեշնչելով իր դաշնակից Թուրքիայի կազմակերպած հայոց ցեղասպանությունը, որի «կես» մեղքը իրեն է բաժին հասնում, և երկրորդ աշխարհամարտի ժամանակ կազմակերպած հրեաների հոլոքոստը»։

Իսկ մենք ժամանակն է, որ Թուրքիայի ճակատին խարանենք 1918 թվականին պատերազմական արտակարգ ատյանի վճիռը. «Լիովին ապացուցված է, որ կոտորածները տեղի են ունեցել Թալեաթ, Էնվեր, Ջեմալ բեյերի անմիջական հրամաններով» գիտությամբ։

...Կոտորածների և չարաշահումների հետևանքով օսմանցիների արժանապատվության վրա ընկած արյունոտ հետքերը, օսմանցիների ճակատը մոտոած սև բծերը կարելի է ջնջել միայն արդարության գրչով»։

ՆԵՐՍԵՍ ՄԿՐՏՉՅԱՆ  
Բանասիրության դոկտոր

## Ի՞նչ ազգանուն կընտրի Ադրբեջանի նախագահը

Ըստ երևույթին, հարևան երկրում որոշել են վերջնականապես հրաժեշտ տալ այն անունին, ինչ «ազգային նույնականացմանը խանգարում է»։ Ադրբեջանի ԳԱՍ տեղեկատվական տեխնոլոգիաների գիտահետազոտական ինստիտուտը մշակել և խորհրդարանի հաստատման է ներկայացրել «Ազգանունների մասին» օրինագիծ։

Ըստ այդմ, օրինագիծն ընդունվելուց և ուժի մեջ մտնելուց հետո «բոլոր նորածինների համար պարտադիր կլինի ներկայում գործող ազգանունների «ով», «և» վերջավորությունների փոխարեն գրել «լի», «լու», «օղլու» կամ «սոյե»։ Ավագ սերնդի քաղաքացիների համար «կգործի կամավորության սկզբունքը»։

Օրինագիծի հեղինակները հավաստիացնում են, որ «դա կվերաբերի միայն ազգությամբ ադրբեջանցիներին և նրանց, ովքեր իրենց կհամարեն ադրբեջանցի»։

Արտառոցն այն է, որ Ադրբեջանի սահմանադրությամբ ադրբեջանցի են համար-

վում բոլոր քաղաքացիները։ Այդ տրամաբանությամբ, կամավոր թե պարտադիր, բոլոր քաղաքացիներն էլ կարող են ունենալ «ազգային նույնականացմանը համապատասխանող» ազգանուն։ Գիշտ է, օրինագիծը հեղինակները մի փոքր «սողանք» թողել են. մարդիկ իրավունք կունենան ձեռք բերելու, այսպես կոչված «աշխարհագրական» և «տոհմական ազգանուններ»։ Ասենք, եթե քաղաքացին ազգությամբ թալիշ է և ծնվել է Լենքորանում, իրավասու է պատկան մարմիններից պահանջելու, որ անձնագրում ունենա «Լենքորան» ազգանունը կամ որպես ազգանուն ընտրի հոր, պապի, նախապապի անձնանունը։ Դիցուք Հեյդար Ալիզադ։

Ազգությամբ թաթերին կթույլատրվի ունենալ «զադե» վերջավորությամբ ազգանուն։ Բայց այդ դեպքում, հավանական է, խնդիրներ կառաջանան։ Մասնավորապես, ի՞նչ որոշում պիտի ընդունի վարչապետ Արթուր Ռասիզադեն պահել ազգանունը և

այդպիսով ընդունել՝, որ ազգությամբ թաթ է, թե՛ իրեն համարել ադրբեջանցի և կոչվել Արթուր Ռասի։ Կամ Ռասիլու, Ռասիօղլու, Ռասիսոյ։ Նույն խնդիրը, հավանաբար, կունենա նաև Կովկասի մուսուլմանների հոգևոր առաջնորդը, որի ազգանունը Փաշազադե է։ Իրենք ընդունվելու դեպքում նաև կհամարվի, որ Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության հիմնադիրներից մեկը Ռասուլզադեն նույնպես ազգությամբ թաթ է եղել։

Բայց ամենահետաքրքրականն այն է, թե ի՞նչ ազգանուն կընտրի Ադրբեջանի նախագահը։ Բնական է, որ «ազգային նույնականացման» առաջին օրինակը պետք է նաև լի։ Հակառակ դեպքում ծիծաղելի կլինի քաղաքացիներից պահանջել, որ հրաժարվեն իրենց ազգանվան «ով» կամ «և» ռուսականը հիշեցնող վերջավորություններից։

Իլիամ Ալիևը, ինչպես և մյուս քաղաքացիները, շատ մեծ ընտրության հնարավորություն ունի։ Նա կարող է ընտրել ազգան-

վան «և»-ը պարզապես ջնջելու տարբերակ և դառնալ Իլիամ Ալի։ Կարող է կոչվել Իլիամ Հեյդարօղլու։ Հնարավոր է՝ նա փորձի հավերժացնել պապի հիշատակը և ընտրի Ալիզադ ազգանունը։

Տարբերակներն, այսպիսով, մի քանիսն են։ Բայց խորհրդի կարգով, թվում է, պետք է ասել, որ նպատակահարմար է, որ նա ընտրի բոլորովին նոր՝ իր պաշտոնից բխող ազգանուն։ Թող կոչվի Իլիամ Սուլթանսոյ։ Գիշտ է, ինքը սուլթանական ցեղից չէ, բայց չէ՞ որ ազգանուն ընտրում է ոչ միայն իր, այլ նաև զավակի, թոռների համար։

Ի՞նչն է խանգարում, որ նախագահի պաշտոնը գահաժառանգության սկզբունքով զբաղեցնելուց և որդուն փոխանցելու մտադրությունը սահմանադրությամբ անբարեկարգ հետո նա իշխանության կրողի համար ընտրի հինգեր ազգանուն։ Սուլթանսոյ «սուլթանի ցեղից սերված»։ Կամ «սուլթանակերպ»։

Իսկ օգուց «ազգային նույնականացման» հետ կապված օրենսդրական այդ «նախաձեռնությունը» հենց այդ նպատակն է հետապնդում։

Վահրամ ԱԹԱՆԵԱՅԱՆ

Սույն թվականի փետրվարի 23-ին «Արմենիա» և «Ար» հեռուստալիքներով հաղորդում տրվեց, որ շուտով Չինական «Fortuna Oil» ընկերությունը կսկսի Հայաստանի երկաթի երեք հանքավայրերի (Հրազդանի, Արվյանի և Սվարանցի) շահագործումը: Այդ մասին հոդված է տպագրվել «Деловой Экспресс» շաբաթաթերթում (25 փետրվարի 2011թ.):

Ինչպես հեռուստահաղորդումների ընթացքում, այնպես էլ «Деловой Экспресс» թերթում հնչում է այն «հին մեղեդին», որ երկաթի հանքավայրերը շահագործելիս թողարկվելու են երկաթի խտանյութեր, և դրանք դուրս են տարվելու գնահատվելով խտանյութերում առկա միայն ու միայն երկաթ մետաղը: Մետալուրգիական գործարան չի կառուցվելու, երկաթ մետաղ չի ստացվելու և երկաթի արտադրանքներ չեն թողարկվելու: Մեր հանքավայրերը շահագործվելու են, իսկ մենք, ինչպես նախկինում, մետաղարտադրանքները ներկրելու ենք Ուկրաինայից, Ռուսաստանի Ղազնուրյունից և հեռավոր այլ երկրներից: Սա դեռ չարիքի փոքրագույնն է, ողջ չարիքն այն է, որ երկաթահանքերում երկաթի հետ համատեղ տարածված են մեկ տասնյակից ավել

17.7% երկաթի միջին պարունակությամբ, որակված են որպես արտահաշվելիչային, սակայն, ինչպես ցույց են տվել Յու.Աղաբալյանի հետազոտությունները անփոփոգ սահմաններով բացահայտում տնտեսապես նպատակահարմար են հոծ և երակիկացանավոր հանքաքարերի համատեղ արդյունահանումն ու մշակումը, այսինքն հնարավոր է պաշարների 23,2 մլն տ հավելած ի հաշիվ արտահաշվելիչային պաշարների: Այդ պարագայում հանքաքարերի 73,3 մլն տ պաշարներում լուծվող երկաթի միջին պարունակությունը կազմում է 27,3%, իսկ երկաթ մետաղի քանակը՝ 20 մլն տ:

Հրազդանի հանքավայրի հանքաքարերի հարստացման հարցերով զբաղվել են նախկին ԽՍՀՄ տարբեր քաղաքների մի քանի գիտահետազոտական ինստիտուտներ: Փորձարկվել են երկաթաքարի թաց զատման լվացումով և առանց լվացման եղանակները: Երկաթաքարի հարստացումը առանց լվացման տրվել է 68%—անոց հարուստ խտանյութ երկաթի 90,0% կորզմամբ, իսկ լվացումով՝ 69,4%—անոց հարուստ խտանյութ 89,3% կորզմամբ: Կորուստներն ամեն դեպքում կազմել են մոտ 1%: Հետազոտողները հան-

տեսական ճգնաժամի հաղթահարումից շատ քիչ ժամանակ անց գնեցին ոչ միայն կարող են վերականգնվել, այլև գերազանցել նախաճգնաժամային գներին):

Հաշվարկները ցույց են տալիս, որ Հրազդանի երկաթի փոքրիկ հանքավայրի ընդերքում երկաթի հետ հարակից տարածված տարրերի արժեքը կազմում է 2 մլրդ 346 մլն 101 հազ. ԱՄՆ դոլար, իսկ երկաթ հիմնական մետաղինը 6 մլրդ դոլար: Եթե հանքավայրը, ինչ—որ ժամանակ շահագործվի և այդ շահագործման ժամանակ հանքահարստացման գործընթացում և մետալուրգիական փուլով խտանյութերի վերամշակման պարագայում կորզվի երկաթ մետաղի 90%—ը, իսկ հարակից բաղադրիչների 80%—ը, ապա լեռնամետալուրգիական ձեռնարկության ստացած հասույթը կարող է կազմել 7 մլրդ 276 մլն 881 հազ. դոլար:

Եթե Հրազդանի հանքավայրի ընդերքից տարեկան արդյունահանվի 1,1 մլն տ հանքաքար, և հանքավայրը շահագործվի 66 տարի, ապա լեռնամետալուրգիական ձեռնարկության տարեկան ստացած հասույթը կարող է կազմել 109 մլն 262 հազ. 477 դոլար:

**Արվյանի երկաթի հանքավայրը** գտնվում է Կոտայքի մարզում Կապուտան գյուղի մոտակայքում, Արվյան քաղաքից 5 կմ և Երևան քաղաքից 22 կմ հեռավորության վրա: Օգտակար հանածոն երկաթաքարը, տեղադրված է օլիգոցենի հասակի կոտրատված ու բրեկչացված անդեզիտային պորֆիրիտների և անդեզիտների միջև, որոնք էլ ծածկված են 50-180մ հզորությամբ բազալտների և անդեզիտաբազալտների հոսքերով: Հանք ներփակող ապարների հզորությունը հասնում է 600-800մ—ի, որից երկրաբանահետախուզական աշխատանքներով (հորատանցքերով) հատվել և հետազոտվել են մինչև 400մ խորությունը: Հանքայնացումը ներկայացված է ոսպնյակաձև, երակաձև և երակիկացանավոր մարմիններով և ունի մագնետիտ—ապատիտային կազմավորում: Այս բոլորը համատեղ կազմում են համարյա հորիզոնական տեղադրված (10-15° անկմամբ) ոսպնյակաձև մի խոշոր մարմին, որը տարածման ուղղությամբ ձգվում է 800-1200մ, անկման ուղղությամբ 700-800մ և ունի 130-150մ հզորություն: Երկաթի պարունակությունը հանքային մարմնում տատանվում է մեծ սահմաններում՝ 10-15%—ից մինչև 60-69%—ի, որտեղ էլ ֆոսֆորի հիմնագոյությունը (ապատիտի) պարունակությունը տատանվում է 3-ից մինչև 13%—ի սահմաններում:

Մագնետիտային հոծ հանքաքարերում լուծվող երկաթի միջին պարունակությունը կազմում է 63,5%, ֆոսֆորի հիմնագոյությունը՝ 0,12%, երկաթի երկօքսիդինը (FeO)՝ 22,34%, երկաթի օքսիդինը (Fe<sub>2</sub>O<sub>3</sub>)՝ 64,23%: Բրեկչացված և երակիկացանավոր հանքաքարերում լուծվող երկաթի պարունակությունը կազմում է 25,15%, ֆոսֆորի հիմնագոյությունը (P<sub>2</sub>O<sub>5</sub>)՝ 0,22%, երկաթի երկօքսիդինը՝ 7,15%, երկաթի օքսիդինը՝ 28,15%:

Երևանի մի քանի գիտահետազոտական ինստիտուտներում, Մոսկվայում, Սանկտ—Պետերբուրգում և Կրիվոյ—Ռոգում կատարված տեխնոլոգիական հետազոտություններով հաստատվել է երկաթաքարի 3-4 փուլերով մագնիսական թաց զատման արդյունավետությունը հանքաքարի տարբեր տեսակների (երկաթ մետաղի տարբեր պարունակությունների աղբյուր, միջին և հարուստ) համար:

Արվյանի հանքավայրի հանքաքարերից բարձրորակ խտանյութեր ստանալու համար պահանջվում է հանքաքարերի մուրը մաքրացում մինչև 0,1մմ: Ստացված խտանյութերը պիտանի են դոմնյան վառարաններում հալման և ուղղակի վերականգնման միջոցով սպունգային երկաթ ստանալու համար:

Հանքաքարերը հեշտ հարստացվող են, սակայն թաց մագնիսական զատման միջոցով ստացված ապատիտային խտանյութը չի բավարարում չափանիշային պահանջներին բարդ հանքանյութային կազմի պատճառով: Ապատիտի հետ, 1,4-ից 2%—ի չափով կապված են հազվագյուտ հողատարրեր, որոնք գործնական հետաքրքրություն կարող են ներկայացնել ապատիտի մաքուր խտանյութեր ստանալու պարագայում:

Արվյանի հանքավայրի հանքաքարերի A+B+C<sub>1</sub> կատեգորիաներով հաստատված պաշարների քանակը կազմում է 243,6 մլն տ, երկաթի միջին պարունակությունը՝ 27,6%: Արտահաշվելիչային պաշարների քանակը՝ 17,0 մլն տ, երկաթի միջին պարունակությունը՝ 20,55%: Մակաբացման ապարների անդեզիտաբազալտների և բազալտների պաշարները A+B+C<sub>2</sub> կատեգորիաներով կազմում են 64,4 մլն տ, որոնք գնահատված են որպես շինանյութ:

Հանքաքարերի հարստացման տեխնոլոգիական ցուցանիշներից պարզորոշ երևում է, որ ինչպես ամենահարուստ (44-56,5%), այնպես էլ միջին (23-33%) և աղքատ (16-18,9%) պարունակության հանքաքարերից ստացվում են բարձրորակ խտանյութեր երկաթի համարյա հավասար պարունակություններով և միմյանց շատ մոտ կորզումներով (քնական է, որ աղքատ հանքաքարերից կորզումները քիչ ավելի պակաս պետք է լինեին): Այս հանգամանքն ասում է այն մասին, որ հանքավայրի հաշվելիչային և արտահաշվելիչային պաշարները կարելի է արդյունահանել համատեղ ունենալով ընդհանուր պաշարների 17 մլն տ հավելած ի հաշիվ արտահաշվելիչային պաշարների: Այդ պարագայում հաշվելիչային և արտահաշվելիչային 260,8 մլն տ պաշարներում երկաթի միջին պարունակությունը կկազմի 27,14%:

(Շարունակելի)

Հ.Ս.ԱՎԱԳՅԱՆ

ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի բաժնի վարիչ,

երկրաբանահանքաբանական գիտությունների դոկտոր



վելի հարակից բաղադրիչներ, որոնք չեն գնահատվելու և նվիրվելու են հանքավայրեր շահագործողներին: Նշենք նաև, որ երկաթի հետ հարակից տարածված բաղադրիչների ընդհանուր արժեքը մոտ 9-18 անգամ գերազանցում է երկաթ մետաղի արժեքին (հիմնավորումը բերվում է ստորև):

Ըստ որում երկաթի հետ հարակից տարածված տարրերի մի պատկանելի մասը (ոսկին, արծաթը, սելենը, տելուրը, գալիումը, գերմանիումը, բերիլիումը և այլն) օգտագործվում է էլեկտրոնիկայի, այդ թվում նաև միկրոէլեկտրոնիկայի արդյունաբերության մեջ, հետևապես դրանց մետալուրգիական փուլով կորզումը Հայաստանի համար ծայր աստիճանի անհրաժեշտություն է:

Հայաստանի Հանրապետությունը բավականին հարուստ է երկաթաքարի ռեսուրսներով: Հայաստանում հայտնաբերված են հարյուրից ավելի հանքավայրեր ու հանքաերակումներ, որոնցից, մեր կարծիքով (ներկա դրությամբ), առավել հեռանկարայինները վեցն են՝ Հրազդանի, Արվյանի, Սվարանցի, Կամաքարի, Բազումի և Թքուջուր—Մարտնոու: Թվարկված առավել հեռանկարային 6 հանքավայր—հանքաերակումներից առաջին երկուսը՝ Հրազդանի և Արվյանի հանքավայրերը մանրագին հետախուզված են և ունեն նախկին ԽՍՀՄ—ի Պաշարների պետական հանձնաժողովի կողմից հաստատված հաշվելիչային պաշարներ: Մյուս չորսից երկուսը՝ Սվարանցի և Բազումի, որակավորված են որպես հանքավայրեր և դրանցում կատարված են նախնական հետախուզական աշխատանքներ, որոնց արդյունքով էլ դրանց տարածքում կան հեղինակային հաշվարկված պաշարներ: Երկուսը՝ նշված 6-ից, որակավորված են որպես հանքաերակումներ, որոնց արդյունաբերական նշանակությունը այժմյան դրությամբ դեռևս պարզված չէ (պարզվում է որոնողագնահատողական աշխատանքների արդյունքով), սակայն համանմանակման եղանակով դրանց հեռանկարները գնահատվում են միանգամայն դրական:

**Հրազդանի երկաթի հանքավայրը** գտնվում է Հրազդան քաղաքի հյուսիսարևելյան ծայրամասում: Տեղադրված է բարենպաստ աշխարհագրական և տնտեսական շրջանում՝ Երևան—Սևան ավտոմայրուղուց 0,5-0,7 կմ դեպի արևմուտք և Հրազդան երկաթուղային կայանից 3 կմ դեպի հյուսիս:

Հանքաքարը ներկայացվում է մագնետիտ հանքանյութի (Fe<sub>2</sub>O<sub>3</sub>) հոծ և երակիկացանավոր կուտակներով: Հոծ հանքայնացումը ներկայացված է երկու զուգահեռ ձգվող շերտաձև մարմիններով, որոնք ունեն համեմատաբար մեղմ անկումներ՝ 10-15°—ից մինչև 45-50°: Հանքային մարմինները տարածման ուղղությամբ ձգվում են 1100 և 600 մ, իսկ անկման ուղղությամբ՝ 300 և 270մ: Լուծվող երկաթի պարունակությունը 20%—ից բարձր է: Հանքային մարմինների երկու՝ պառկած և կախված կողերում մոտ 40 մ հզորությամբ տարածված է երակիկացանավոր հանքայնացումը երկաթի 15-ից մինչև 25% պարունակությամբ: Հետախուզված հաշվելիչային պաշարների հաշվարկում ընդգրկված են միայն հոծ հանքաքարերը: Արդյունաբերական (B+C<sub>1</sub>) կատեգորիաներով հաստատված պաշարները կազմում են 50,1 մլն տ՝ 31,76% լուծվող երկաթի միջին պարունակությամբ: Երակիկացանավոր հանքաքարերը 23,2 մլն տ պաշարներով և

գել են այն եզրակացության, որ Հրազդանի հանքավայրի հանքաքարերի հարստացման ամենաարդյունավետ եղանակը համարվում է թաց զատումը լվացումով, որի խտանյութերը պիտանի են ուղղակի վերականգնման եղանակով մաքուր երկաթ ստանալու համար, որն էլ հալելով վերածվում է էլեկտրատեխնիկական պողպատի:

Հրազդանի հանքաքարերում թացի հիմնական մետաղից, երկաթից, մագնետիտ հանքանյութում հայտնաբերվել են նաև մի շարք տարրեր՝ ցիրկոնիում 42գ/տ պարունակությամբ, գալիում 18գ/տ, արծաթ 4,5գ/տ, ոսկի 1,0գ/տ, միկել 14,0գ/տ, կոբալտ 276գ/տ, տիտան 738գ/տ, լիթիում 9գ/տ, ստրոնցիում 27գ/տ, պղինձ 418գ/տ, ցինկ 816գ/տ, կապար 31գ/տ: Մագնետիտային հանքանյութի միջին պարունակությունը կազմում է ամբողջ 73,3 մլն տ հանքաքարերի պարունակության 37,71%—ը, հետևապես մագնետիտ հանքանյութի ընդհանուր քանակը կազմում է 27,64 մլն տ: Այս պարագայում Հրազդանի հանքավայրի հիմնական մագնետիտ հանքանյութի հետ համատեղ տարածված գրված և հազվագյուտ տարրերի, ինչպես նաև ազնիվ և այլ մետաղների քանակները կազմում են. ցիրկոնիումինը՝ 1160,9տ, գալիումինը՝ 497տ, արծաթինը՝ 124տ, ոսկուինը՝ 27,6տ, միկելինը՝ 387տ, կոբալտինը՝ 7628տ, տիտանինը՝ 20398տ, լիթիումինը՝ 249տ, ստրոնցիումինը՝ 746տ, պղինձինը՝ 11553տ, ցինկինը՝ 22554տ, կապարինը՝ 857տ:

Հրազդանի երկաթի հանքավայրի հանքաքարերում ԽՍՀՄ Պաշարների պետական հանձնաժողովի կողմից հաստատվել են միայն երկաթ մետաղի պաշարները: Երկաթի մագնետիտ հանքանյութում պարունակվող հարակից տարրերի քանակները հաշվարկվել են մեր կողմից վերը բերված տվյալների հիման վրա և դրանք վերագրվել են հանքավայրի օգտակար տարրերի ռեսուրսներին:

Նշենք, որ երկաթի հետ հարակից տարածված տարրերի պարունակությունները որոշվել են ինչպես ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի գիտնականների, այնպես էլ երկաթաքարերի հարստացման տեխնոլոգիական հետազոտությունների կատարող քիմիկ—տեխնոլոգիների կողմից, և այդ անալիզների արդյունքները նշույլ անգամ կանխավորում են հարուցում, որի հետ էլ կապված մենք դրանք քանակները դժվարությամբ ենք վերագրել P<sub>1</sub> կատեգորիայի ռեսուրսներին: Եթե հարակից տարրերի գծով կատարված անալիզների քանակը քիչ ավելի մեծ լիներ, ասենք երկաթի գծով կատարված անալիզների թվաքանակի 10 տոկոսի չափով, ապա այդ հարակից տարրերի քանակները հնարավոր կլիներ վերագրել C<sub>2</sub> կատեգորիայի պաշարներին: Ինչևիցե, առայժմ դրանք թողնենք ռեսուրսների մեջ. միևնույն է՝ հանքավայրը չի շահագործվում և, հավանաբար չի էլ շահագործվելու, քանի որ Հրազդան քաղաքը աստիճանաբար շարժվում է դեպի հանքավայրի տարածքը (արդեն իսկ տներ են կառուցվել հանքավայրի տարածքում):

Այժմ հաշվարկենք Հրազդանի երկաթի հանքավայրի ընդերքի հարստությունների արժեքը 2007թ. մարտ—ապրիլ ամիսներին նախաճգնաժամային օրերին, երկաթի և երկաթի հետ հարակից տարածված տարրերի միջազգային շուկայում ունեցած գներով (համոզված ենք, որ ֆինանսատն-

Ժ. Պ. ԱԼԵՍ

«Երբ նայում ենք ջարդերի ու ավերումների երկար շարանը, որոնք վերացրել են քարտեզից անթիվ քաղաքներ, ամայացրել ընդարձակ երկրամասեր, առաջ են բերել ժողովուրդների գաղթեր, հիանում ենք հայ ժողովուրդով, որը ոչ միայն դիմացավ ոչնչացման, այլև մերժեց ուժացումն ու դավանափոխումը (խալանականի), որոնք կարող էին վերջ դնել նրա դժբախտություններին:

Այդ հիացմունքին խառնվում է երախտագիտությունը, որովհետև եթե հայ ազգը անհայտանար կամ միաձուլվեր հարևան ազգերին, ապա քաղաքակրթության շենքից կպակասեր մի քար, գուցե և զմբեթ»:

Ստեփանոս Ստեփանուպոլոս  
Հունաստանի «Քաղաքական գաղութի»  
մեթոդաբանը

«Դժբախտ հրեա ժողովուրդը գոնե տեսավ կանցելը Վիլի Բրանդտին՝ ծնրադրած համակենտրոնացման մի ծամբարում, կարծես Աուշվիցում, հրապարակավ ներողություն խնդրելիս համաշխարհային հասարակությունից, մարդկությունից:

Կա՞ որևէ մեկը, ոչ միայն այստեղ, ամբողջ աշխարհում, որ հավատա, թե Դեմիդովը կամ որևէ մեկ ուրիշ թուրք նախագահ կամ վարչապետ այդ նույն պատճառով երբևէ պիտի ծնրադրի Եփրատի ափին, Էրզրումի կիրճերում, Խարբերդի ձորերում և ներողություն պիտի խնդրի մարդկությունից՝ մեկուկես միլիոն հայերի ջարդի համար»:

Հրաշյա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ  
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ես ընկել եմ պազոտ Շամիրամի նետից, Դին Դոմմն է զարկել ինձ մահացու խոցով, Իմ արյունն են որել, խառնել Տղմուտ գետին, Իմ լեզուն են այրել ատրուշանի բոցով:

Խաչ են դաշել կրծքիս բյուզանդական տեգով, Արաբ մծուզների սմբակի տակ գցել, Ինձ խարույկ են հանել մոնղոլների ձեռքով, Սիրտս օսմանական սվիններին ցցել:

Ինձ հայրենի մեր տան թխկենուց են կախել, Եվ հոգիս են բանտել շղթաներով երկաթ, Ինձ զարկել են, խարկել ու կենդանի թաղել... Բայց ես դեռ կա՞մ:

ԱՎԵՏԻՔ  
ԻՍԱՀԱԿՅԱՆ

«Դու, հայ ժողովուրդ, մեծ, ամուր ժողովուրդ: Ինչե՞ր տեսար... Աշխարհք ամեն վրադ թափվեցին, մարդ չմնաց, որ չխոցեր քեզ, ատամ չմնաց, որ չկրծեր քեզ և զարշապար, որ չկոխեր քեզ... Բայց դու մնացիր մեծ ու անսասան: Աշխարհը լինե՞ր քո տեղը՝ կփվեր, օվկիան լինե՞ր՝ կցամաքեր, երկինք լինե՞ր՝ կմարեր իր արևներով ու աստղերով...»:



Չմոռանանք լինելիության մեր բանաձևը. թեև անցնող ժամանակի հետ նվիրյալները հեռանում են, սակայն նվիրումի օրորոցը՝ էպոսական Դավթի կամքով ու զորությամբ՝ դարձյալ ու դարձյալ մեծ նպատակների հրաշամանուկներ է ծնում:

Ռաֆայել ՍԱՀԱԿՅԱՆ

...Թեև Սեբրոպն ու հարևան գյուղացին վեճի մեջ են որքա՞ն է միլիոնը: Վիճում են ու գնում ս. Ախբերիկ պարզելու, թե որքան է միլիոնը հարյուր հազար, թե՞ հազար հազար: Դենց այդքան հայ զինվոր է հարկավոր հայոց լեռները մաքրելու չարքերից... Բայց, ուզում եք հավատացե՞ք, ուզում եք ոչ մի տղա, մեն-մենակ մի ջահել Կարմիր իրիցու տնից, անունն Արաբո, ծին հեծած կանգնել է Ծիրնկատարին, սուլթան Զամիդին կռիվ է հայտարարել:

Հայ ֆիդայական շարժման սկիզբը այսպես հեքիաթային, բայց պատմականորեն ճիշտ, մեզ ներկայացնելով, խաչիկ Դաշտենցը հարց է տալիս՝ որքա՞ն ժամանակ է անցել, ահա, քսաներորդ դարի մուտքն է, բայց Դավթից

Պայքող Աղբյուրի հրաշքը հայ ֆիդայիներն էին: Զրեղեն շնչով այրեր, հայրենիքի մատաղացու որդիներ, որ ապրեցին միայն հայրենիքի կյանքով և դեռ իրենց կենդանության ժամանակ դարձան պատմություն:

...Անօրենները դժոխք էին դարձրել այն երկիրը, ուր գործում էին հայ ֆիդայիները: Եվ նրանք կամոք էին հազել դժոխքի բոցերից կարված կրակե շապիկները: Հայրենիքի որդու առաքելությունն էր դա: Ինչպե՞ս կարող է լինել հանգիստ և անձնական ապահով կյանք, երբ հայրենիքն ինքն է անապահով, որտեղի՞ց պետք է հայտնվի անձնական երջանկությունը, երբ հայրենիքն ինքն է ապերջանիկ, ո՞ր կտանի անձնական փառքի ձգտումը, երբ հայրենիքն ինքն է անփառու-

կության ծաղիկը որոնելու, են զլխեն որոնել են, բայց ոչ մեկը չի գտել: Եվ երջանկության ծաղիկ ետևից գնացողը այլևս համարվում էր ցնորքով տարված, խենթ:

Այդ «խենթը» Կարմիր իրիցու տան Արաբոն էր: Հայոց լեռների երջանկության ծաղիկ որոնող «խենթերը» ֆիդայիներն էին: Մի տղա, միայնակ ու ասպետ մի զինվոր արյունարբու ու նենգ մի բանակի դեմ: Յոթ զինվոր յոթ բանակի դեմ: Ամենաշատը քառասուն զինվոր՝ քառասուն հազարանոց արյունարբու ու նենգ բանակի դեմ («Քառասուն» թիվը հեքիաթային է, իսկ պատմությունը՝ իրական): Միայնակ զինվորը գիտեր, որ մի բանակի հաղթել չի կարող: Քառասունը գիտեին, որ հաղթանակը քառասուն զազ խորը քառասուն ջրաղացքարի տակ է, սակայն... որոնում էին իրենց լեռների Բրաբիոն ծաղիկը: Կհաղթես, թե կպարտվես՝ չարի դեմ չարանալը առաքելություն է, կգտնես, թե ոչ հայրենիքի երջանկության ծաղիկը որոնելը հայրենիքի որդու պարտքն է:

Ուխտին հավատարիմ՝ զենքին պսակված, նրանցից շատերը փաթաթվեցին իրենց պատանքացու կտավներով և, որպես Բրաբիոն ծաղիկի հունդեր, թաղվեցին սարերում: Ով մնաց՝ տեսավ հայ զոհգութան: Եվ տեղահանվող, լլկվող, մորթվող ու այրվող ժողովրդի համար դարձավ պաշտպան բանակի խորհրդանիշ և բանակ, առաջնորդի խորհրդանիշ և առաջնորդ, կամքի խորհրդանիշ և կամք, հույսի խորհրդանիշ և հույս...



Մուշեղ ԳԱԼՈՐՅԱՆ  
Դաշտենցի ծննդյան 70-ամյակի առթիվ  
գրված խոսքից  
**Բրաբիոն ծաղիկ  
որոնողը**

մինչև Արաբոն ծիածանի կամարի տակ լեռների ու նրանց մարդկանց ճակատագրում ի՞նչն է փոխվել, կայծակնահար նույն լեռներն են, չարքերով լցված վիհերը, իր մենակությանը խաչված նույն ժողովուրդը և ըմբոստ ճակատով նույն միայնակ զինվորը անունը Դավթի թե Արաբո:

...Սոսե Իմոն հասել է մինչև Ինգիլիզ և քրիստոնյա բազմություն, ի տեղ օգնության, մի օրորոց է ստացել նվեր: Այդ լեռների պատմիրակը աշխարհի հզորներից հզոր ո՞ր բազմության դուռն էլ գնար, այդ օրորոցը կստանար օրորի ինչպե՞ս:

Հույսը դարձյալ հրաշքն է: Պայքող աղբյուրի ակունքից հայտնվող Քուռկիկ Ջալալին, երկրի ընդերքից հայտնվող հրեղեն ծին:

Այդ հրեղեն ծին Արաբոն էր: Այդ հրեղեն ծին Աղբյուր Սեբրոն էր, Սպաղաց Սակարն էր, Գևորգ Զառնը, Անդրանիկը, Դժոխք Զրայրը, Սմբատը, Գալեն, Չուրն, Սորոք Կարոն, Արծիվ Պետոն, Սևքաթեցի Սարոն, Կայծակ Անդրիանը, Տեր Զաքի Ադամը, Կոտո Զակորը, Լաճկանցի Արթուրը, Առաջ Զորիկը, Ալադին Միսակը, Բրինդարը, Սեյդ Պողոսը, Արտոնքա Ջնդոն, Մուրոն, Բամբակու Մելոն, այդ հրեղեն ծին Շենիքցի Մանուկն էր, Փեթարա Մանուկը, Փեթարա Թադեն, Փեթարա Սիսոն, Փեթարա Իսրոն...

նակ, ո՞րն է անձնական սերը, երբ սիրո օրորոց հայրենիքը դժոխքի վերակացուն է օրորում:

Քարանձավ էր նրանց տունը, ամենաշատը, ամենաշատը՝ գյուղեզորի մարազը կամ զոմը: Խոտը կամ ծյունն էր նրանց անկողինը, փոթորիկն էր նրանց սպիտակեղենը, քարն էր նրանց բարձը, սեփական շունչն էր նրանց կրակը: Ձենքի հետ պսակված, ուսապարկերում մի կտոր կորեկից կամ մի բուռ փոխինձ, ուսապարկերում իրենց պատանքացուն, հպարտ ճակատները թշնամու նենգ զնդակի դեմ բաց, զոր ու գիշեր լեռներում քայլում են կրակե շապիկ հագած աստվածները:

Արաշխություն է անանձնական կյանքը: Այդպիսի կյանքով կարող է ապրել միայն նա, ով իր ազատությունը չի զատում հայրենիքի ազատությունից, ով իր փառքը չի բաժանում հայրենիքի փառքից, ով իր երջանկությունը չի բաժանում հայրենիքի երջանկությունից, ով իր սերը չի զատում հայրենիքի սիրուց... Ասպետություն, ազատություն, հերոսություն, փառք և երջանկություն է անանձնական կյանքը: Եվ անսահման է անանձնական կյանքի սահմանը:

Կարմիր իրիցու տան երբեմնի ավետարանում գրված է եղել թե՛ ավետյաց երկրի լեռներում մի ծաղիկ է աճում երջանկության Բրաբիոն ծաղիկը: Շատերն են ելել երջան-

Հայրաբարություն

«ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը հայտարարում է մրցույթ «Բույսերի կարգաբանության և աշխարհագրության», «Երկրաբուսաբանության և էկոլոգիական ֆիզիոլոգիայի» և «Բույսերի ներմուծման» բաժինների վարիչների թափուր տեղերի համար:

Անհրաժեշտ փաստաթղթերը՝ հայտարարության օրվանից մեկ ամսվա ընթացքում, ներկայացնել հետևյալ հասցեով՝

ք. Երևան, Աճառյան փող. 1, ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտ:

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԵԼՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բադրամյան 24թ, հեռ. 56-80-14:  
Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:  
Ստորագրված է փապարության՝ 21.04.2011 թ.:

"ՀԱՅԿԱՊԵՏ" ("Hayka") gazeta HAH PA